



«Ժողովուրդներ, հանրահավաքներ, երթեր եվ ՅՈՒՅՅԵՐ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ (ԵԱՀԿ-
ԺՀՄԻԳ)

Փորձագետ Ջերեմի ՄակԲրայդ

Վարչակա
4-րդ ապրիլի, 2004թ.

**«Ժողովներ, Հանրահավաքներ, Երթեր Եվ Ցուցեր
ԱնՑկԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն

1. Սույն եզրակացությունը վերաբերում է «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին, որն Ազգային Ժողովի պատգամավորների կողմից քննարկվելու է 2004թ. ապրիլին: Սույն եզրակացությունը կազմվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի) պահանջով: Եզրակացության մեջ նախևառաջ քննության են առնվում օրենքի նախագծի նպատակի և գործողության շրջանակների վերաբերյալ հողվածները, ապա՝ հանրության իրավունքները, պարտավորությունները և կարգավորումը, ինչպես նաև, ի վերջո, պատասխանատվության վերաբերյալ և եզրափակիչ դրույթները: Բոլոր դեպքերում վերլուծվում է այդ հողվածների համատեղելիությունը միջազգային չափանիշներին, եզրափակվելով որոշակի ուշադրության կարիք ունեցող հողվածների ամփոփմամբ և նշված չափանիշներին օրենքի նախագծի համապատասխանության ընդհանուր գնահատականով:

2. Օրենքի նախագծի վերլուծությունը հիմնականում կենտրոնանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-րդ հողվածով նրաշխարհում՝ հավաքներ կազմելու ազատության իրավունքի կատարման խնդրի շուրջ, ինչպես նաև անդրադառնում է Հայաստանի Հանրապետության կողմից կնքված մի շարք միջազգային փաստաթղթերի, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հողվածին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (այսուհետ՝ «Միջազգային դաշնագիր») 21-րդ հողվածին, Ռ-ասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 5(d)(ix) հողվածին, Երեյալի իրավունքների մասին կոնվենցիայի 15-րդ հողվածին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա») 11-րդ հողվածին և ԵԱՀԿ Մարդկային տարածաշափի համաժողովի 1990թ. հունիսի 29-ի կոպենհագենյան նստաշրջանի փաստաթղթի 9.2 կետին: Այնուհանդերձ, կարևոր է մտապահել, որ հավաքներ կազմելու ազատությունը կարող է «արտահայտվելու» ազատության¹ և կրոնի ազատության² կոնկրետ արտացոլում լինել, որոնք նույնպես վերոհիշյալ փաստաթղթերով նրաշխարհում ազատություններ են. հետևաբար, օրենքի նախագիծը պետք է նաև համապատասխանի այդ սկզբունքներին: Բացի այդ, հավաքներ կազմելու ազատության նկատմամբ միջամտությունը, հավանական է, կոնկրետ ազդեցություն կունենա այնպիսի իրավունքների վրա, ինչպիսիք են

¹ Միջազգային դաշնագրի 19-րդ հողված և Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հողված:

² Միջազգային դաշնագրի 18-րդ հողված և Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հողված:

անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները³ և մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը⁴, և սրանք նույնպես կարևորվում են օրենքի նախագծի քննարկման տեսակետից: Բացի այդ, հավաքներ կազմելու ազատության՝ օրենքի նախագծում արտացոլված ռեժիմով, ինչպես նաև օրենսդրական այլ ակտերով պետք է նախատեսել ենթադրյալ և իսկապես տեղի ունեցած խախտումների կապակցությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ նրաշխարհող դրույթներ:⁵

3. Վերը թվարկված փաստաթղթերում հավաքներ կազմելու ազատության սահմանադրական և միջազգային նրաշխարհի ձևակերպումը, ընդհանուր առմամբ, շատ նմանություններ ունի, որոնք ընդգծում են հավաքներ կազմելու ազատության հիմնարար նշանակությունը ժողովրդավարական հասարակարգի կայացման գործընթացում: Այնուհանդերձ, միայն Եվրոպական կոնվենցիան և Միջազգային դաշնագիրն են պարունակում որոշ իրատեսական ձևակերպումներ այն իրավաչափ հիմքերի, որոնց դեպքում կարելի է սահմանափակել այս ազատության իրականացումը: Բացի այդ, վերոհիշյալ երկու փաստաթղթերը մեկնաբանող կառույցների՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային որոշումները⁶ կարող են իսկական ուղեցույցի դեր կատարել հավաքներ կազմելու ազատության նյութական պահանջների իմաստով, և դրանք պետք է հաշվի առնել օրենքի նախագծի դրույթները գնահատելիս: Նշված երկու կառույցների որոշումներից պարզ է դառնում, որ հավաքներ կազմելու ազատության միջազգային նրաշխարհը վերաբերում է հավաքների լայն շրջանակի՝ թե՛ ստատիկ, թե՛ շարժվող, և թե՛ մասնավոր կամ հասարակական վայրերում անցկացվող հավաքները, ներառյալ, հասարակական վայրերի դեպքում, փողոցների և մայրուղիների վրա անցկացվող հավաքները:⁷ Ավելին, մասնակիցների և կազմակերպիչների իրավունքները պետք է ճանաչվեն որպես առանձին իրավունքներ:⁸ Կոնկրետ վայրում հավաքներ անցկացնելու իրավունք, որպես այդպիսին, գոյություն չունի, սակայն, իրավաչափ կանոնակարգման պահանջների պահանջման պարագայում, կարելի է ակնկալել, որ այդ նպատակի համար հասարակական վայրերը հասանելի են և, չնայած որ դա շատ եզակի դեպքերում է հավանական, չի կարելի լիովին բացառել, որ անձանց համար պետք է նաև հնարավոր լինի մասնավոր տարածքի վրա հավաքվելն այն դեպքերում, երբ այդ մասնավոր տարածքն ինչ-որ հասարակական գործառնությամբ է կատարում:⁹ Հավաքներ անցկացնելու նկատմամբ չի կարող իրականացվել որևէ սահմանափակում, որը համահունչ չէ սահմանված նպատակներին¹⁰, և այն դեպքերում, երբ

³ Միջազգային դաշնագրի 9-րդ հոդված և Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդված:

⁴ Միջազգային դաշնագրի 17-րդ հոդված և Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված:

⁵ Միջազգային դաշնագրի 2(3)-րդ հոդված և Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդված:

⁶ Ինչպես նաև, Մարդու իրավունքների նախկին Եվրոպական հանձնաժողովի նախադեպային որոշումները Եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ:

⁷ Տե՛ս հայցադիմում 8191/78, «*Rassemblement Jurassien Unite Jurassienne-ն ընդդեմ Շվեյցարիայի*» (1979) 17 DR 93, հայցադիմում 8440/78, «*Բրիտանիան ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի գործն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (1980) 21 DR 138 և հայցադիմում 33689/96, «*Անդերսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության*», 91DR 79 (1997):

⁸ Հայցադիմում 8440/78, «*Բրիտանիան ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի գործն ընդդեմ Միացյալ Թագավորության*», 21 DR 138 (1980):

⁹ *Էփլեին ընդդեմ Միացյալ Թագավորության*, Դատարանի 2003թ. մայիսի 6-ի դատավճիռը, և հայցադիմում 33689/96 *Անդերսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 91 DR 79 (1997):

¹⁰ Ազգային անվտանգություն, հանրային կարգուկանոն (ֆրանս. *ordre public*), հանրային անվտանգություն, հասարակության առողջության և բարոյականության պաշտպանություն և այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանություն թե՛ Եվրոպական կոնվենցիայի, թե՛ Միջազգային դաշնագրի դեպքում: Եվրոպական կոնվենցիայում նաև նշվում է հանցագործությունների

կանոնակարգման նկատառումներով չի թույլատրվում դրա անցկացումը կոնկրետ վայրում, ապա պետք է լինի հարմար այլընտրանք:¹¹ Հավաքի վայրում ուղերձ հաղորդելու միջոցը պետք է լինի խաղաղ, քանի որ երաշխիքը չի ներառում բռնի գործունեություն ծավալելու իրավունքը,¹² սակայն, եթե ուրիշներին անհարմարություն պատճառելը դա չպետք է մեկնաբանել որպես իրավիճակ, որում ցույցը դադարում է խաղաղ ցույց լինելուց, և որոշ անհարմարություն պետք է ակնկալել,¹³ չնայած որ դա չպետք է սահմանազանցող լինի,¹⁴ և ընդունելի չէ նաև ուրիշների գործողությունները շարունակաբար խոչընդոտելը/արգելակելը:¹⁵ Պահանջվում է ցուցարարներին պաշտպանել ուրիշների խանգարող գործողություններից, սակայն հակառակ տեսակետի արտահայտումը չի կարող «խանգարող գործողություն» համարվել և այդ հիմքով արգելվել: Ապահովվող պաշտպանության աստիճանը կարող է կախված լինել առկա ռստիկանական ռեսուրսներից, և որոշ դեպքերում կարող է անհնար լինել այն պահանջի բավարարումը, որ թույլատրվի ժողովրդականություն չվայելող միտինգի անցկացումը,¹⁶ և այդ դեպքում կարող է ողջամիտ լինել կոնկրետ խանգարող գործողությունից շեղվելը:¹⁷ Հավաքներ կազմելու ազատության իրականացման նկատմամբ բոլոր սահմանափակումները պետք է համաչափ լինեն,¹⁸ այսինքն՝ միշտ պետք է ընտրվի նպատակի իրագործման ամենաքիչ «ներխուժող» (ինտրուզիվ) միջոցը, ներառյալ այն պատժամիջոցները, որոնք կիրառվում են հավաքների անցկացումը կանոնակարգող նորմերի խախտումների համար:¹⁹ Կանոնակարգման գործընթացի շրջանակներում կարող է պահանջվել կազմակերպվող իրադարձության մասին նախապես իրազեկում տալ,²⁰ անցկացնելու համար թույլտվություն ստանալ,²¹ և որոշակի պայմաններ կատարել անցկացման եղանակի, ժամի կամ վայրի իմաստով, սակայն այդ մեթոդների ընդունելիությունը կախված է այն հանգամանքից, որ դրանց կազմակերպումը կամ փաստացի իրագործումը չպետք է անհիմն կերպով խաթարեն հավաքի անցկացումը:²² Համապատասխան կանոնակարգման առկայության մասին կարելի է դատել միայն այն դեպքում, երբ որոշումների կայացումը կախված է կոնկրետ դեպքի հանգամանքներից, և կանոնների կարծրացած կիրառությունը և զուտ կանկախալ ենթադրությունների վրա հենվելն ընդունելի չի համարվում:²³ Արգելքների

կանխարգելումը և ուղղակիորեն թույլատրվում է այս ազատության իրականացման սահմանափակումը զինված ուժերի, ռստիկանության և պետական կառավարման մարմինների անդամների նկատմամբ, սակայն, ամենայն հավանականությամբ, դրանք անուղղակիորեն բխում են Միջազգային դաշնագրում ամրագրված դրույթներից:

¹¹ Հայցադիմում 25522/94, *Ռայր, Ալմոնդր և «Նիգոշիեթ շոու»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 81 DR 146 (1995):

¹² Հայցադիմում 19601/92, *Չիրաքլարն ընդդեմ Թուրքիայի*, 80 DR 46 (1995):

¹³ Հայցադիմում 13079/87, *Գ-ն ընդդեմ Գերմանիայի դաշնային հանրապետության* (1989) 60 DR 256:

¹⁴ *Գնչուական խորհուրդն ընդդեմ Միացյալ Թագավորության*, Դատարանի 2002թ. մայիսի 14-ի որոշումը (գործի ընդունելիության մասին):

¹⁵ *Նիկոլը և Սելվանյազամն ընդդեմ Միացյալ Թագավորության*, Դատարանի 2001թ. հունվարի 11-ի որոշումը (ընդունելիության մասին):

¹⁶ *Պլատֆորմ Արզն ֆյուր դաս Լեբենն ընդդեմ Ավստրիայի*, Դատարանի դատավճիռ:

¹⁷ *Խորհերն ընդդեմ Ավստրիայի*, 25-ը օգոստոսի, 1993թ.:

¹⁸ Հայցադիմում 8191/78, «*Rassemblement Jurassien Unité Jurassienne*»-ն ընդդեմ *Շվեյցարիայի*, 17 DR 93 (1979):

¹⁹ *Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի*, Դատարանի դատավճիռ, 26-ը ապրիլի, 1991թ.:

²⁰ *Կիվենմասն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով Հանձնաժողովի 1990թ. թիվ 412 որոշում, տես 1994թ. մարտի 31-ի «Տեսակետները» («վեցժամյա» իրազեկում):

²¹ Հայցադիմում 19601/92, *Չիրաքլարն ընդդեմ Թուրքիայի*, 80 DR 46 (1995):

²² Հայցադիմում 25522/94, *Ռայր, Ալմոնդր և «Նիգոշիեթ շոու»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 81 DR 146 (1995):

²³ *Ստանկոպը և «Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի*, Դատարանի 2001թ. հոկտեմբերի 2-ի դատավճիռը, և *Փարկն ընդդեմ Կորեայի* գործով Հանձնաժողովի 628/1995 որոշումը, տես 1998թ. հոկտեմբերի 20-ի «Տեսակետներ»-ը:

կիրառումը չպետք է հանգեցնի համանման միջոցառումների նկատմամբ տարբերակված վերաբերմունքի, եթե վերջինիս չունի բանական և օբյեկտիվ հիմնավորում:²⁴ Հավաքների անցկացման լիակատար արգելքը կարող է արդարացված լինել կոնկրետ իրավիճակներում, սակայն այդ անհրաժեշտությունը հիմնավորող լուրջ ապացույցներ կպահանջվեն:²⁵ Չնայած որ ձերբակալումը կամ հավաքի ցրումը երբեմն կարող է համաչափ արձագանք լինել օրենքի լալստման փաստի²⁶ և հասարակական կարգուկանոնին սպառնացող ռիսկի նկատմամբ,²⁷ դրանք պետք է բոլոր դեպքերում առաջնորդվեն ուժի գործադրման միջազգային չափանիշներով, ներառյալ տեղի ունեցող հնարավոր մահվան և մարմնական վնասվածքների դեպքերը հետաքննելու պահանջով:²⁸ Բոլոր որոշումները պետք է կայացվեն արդյունավետ և անհապաղ դատական հսկողության տիրույթում, որպեսզի ապահովվի իրավիճակ, որում հավաքների ազատությունն անհարկի խոչընդոտների չհանդիպի:²⁹

4. Այնուհանդերձ, հարկ է ընդգծել, որ իրավաչափ նպատակի գոյությունը բավարար հիմք չէ հավաքներ կազմելու ազատությանը միջամտելու համար: Նաև խիստ կարևոր է, որպեսզի միջամտությունը նախատեսված լինի օրենքով:³⁰ Սա նշանակում է ոչ միայն ֆորմալ հիմքի գոյություն, այլ նաև՝ սահմանափակման շրջանակների ձևակերպում բավարար ճշգրտությամբ, որպեսզի հետևանքները կրողների համար հնարավոր լինի կանխատեսել այդ պահանջների լալստումները կոնկրետ վարքագիծ որդեգրելու պարագայում,³¹ , չնայած որ դա չի բացառում հայեցողական իրավասությունների կիրառումը և, իսկապես, բավարար համակարգվածություն ունենալու դեպքում, հավանական է, կնպաստեն, որպեսզի որոշումներ կայացվեն կոնկրետ դեպքի հանգամանքների հիման վրա:³² Սա խիստ կարևոր է թե օրենսդրության մեջ օգտագործված ձևակերպումների, թե օրենսդրության կառուցվածքի իմաստով. եթե կոնկրետ դրույթները չափազանց աղոտ են, կամ ողջ օրենսդրական դաշտը լի է հակասություններով, ապա հնարավոր չի լինի արդարացված համարել այնպիսի սահմանափակումների կիրառումը, որոնք օրենքով բավարար ճշգրտությամբ նախատեսված չեն: Հետևաբար, հավաքների արդյունավետ

²⁴ Հայցադիմում 8440/78, *Բրիտանիան ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի գործն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1980) 21 DR 138:

²⁵ Տես հայցադիմում 8191/78, «*Rassemblement Jurassien Unité Jurassienne*»-ն ընդդեմ *Շվեյցարիայի*» (1979) 17 DR 93 և հայցադիմում 8440/78, *Բրիտանիան ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի գործն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1980) 21 DR 138:

²⁶ Հայցադիմում 19601/92, *Չիրաքյարն ընդդեմ Թուրքիայի*, 80 DR 46 (1995) և *Սելվանայազամն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Դատարանի 2002թ. դեկտեմբերի 12-ի որոշումը (ընդունելիության մասին):

²⁷ *Յիսն ընդդեմ Ֆրանսիայի* գործով Դատարանի 2002թ. ապրիլի 9-ի դատավճիռը, *Սթիլն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Դատարանի 1998թ. սեպտեմբերի 23-ի դատավճիռը, հայցադիմում 9415/81, *Գ-ն և Ե-ն ընդդեմ Նորվեգիայի գործով* 35 DR 30 (1983) և *Նիկոլը և Սելվանայազամն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Դատարանի 2001թ. հունվարի 11-ի որոշումը (ընդունելիության մասին):

²⁸ *Գյուլնչն ընդդեմ Թուրքիայի* գործով Դատարանի 1998թ. հուլիսի 27-ի դատավճիռը:

²⁹ Հայցադիմում 8440/78, *Բրիտանիան ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի գործն ընդդեմ Միացյալ Թագավորության* (1980) 21 DR 138:

³⁰ Հանձնաժողովի թիվ 412.1990, *Կիվենմասն ընդդեմ Ֆինլանդիայի*, 1994թ. մարտի 31-ի «Տեսակետներ»-ը:

³¹ *Սթիլն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Դատարանի 1998թ. սեպտեմբերի 23-ի դատավճիռը և *Հաշմանը և Հարափն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Դատարանի 1999թ. նոյեմբերի 25-ի դատավճիռը:

³² Հայցադիմում 25522/94, *Ռայը, Ալմոնդը և «Նիգոշիեթ շոու»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 81 DR 146 (1995):

և պատշաճ կանոնակարգում իրականացնելու շահը պահանջում է, որպեսզի համապատասխան օրենքները մշակվեն այդ պահանջների պահպանմամբ:

5. Հավաքների ազատության իրականացումը և այդ ազատության իրականացմանը հաճախ հակասող իրավաչափ շահերի նրաշխարհում, անխոս, նրկուն էլ կախված են օրենքի այնպիսի ձևակերպումներից, որոնք հարգում են վերոհիշյալ նրկու կետերում արտահայտված դիտարկումները: Այնուհանդերձ, օրենքի կիրառման ձևը, որպես կանոն, շատ ավելի կարևոր է նշված նպատակների պրակտիկ իրագործման տեսակետից: Չնայած որ շատ կարևոր է նախևառաջ կենտրոնանալ օրենքի ճիշտ ձևակերպումներ ստանալու վրա, սակայն անգամ ավելի կարևոր է ապահովել, որպեսզի օրենքի իրագործման համար պատասխանատուները լիովին հասկանան հավաքներ կազմելու ազատության նշանակությունը ժողովրդավարական հասարակության մեջ և պատշաճ ուսուցում և պատրաստում անցնեն, որպեսզի օրենքը հավոր պատշաճին ի կատար ածեն: Այս պայմանների բացակայության պարագայում անհավանական է միջազգային չափանիշների կատարումն իրականում:

Կարգավորման առարկան և շրջանակները

Հոդված 1

6. Օրենքի նախագծի կարգավորման առարկայի և նպատակների վերաբերյալ բաժնի առաջին մասում տեղ գտած ձևակերպումը, մասնավորապես, հավաքներ կազմելու ազատության սահմանադրական իրավունքի իրականացման և մի շարք շահերի նրաշխարհում համար պայմանների ստեղծման վերաբերյալ դրույթը, հստակ է և գրեթե ամբողջությամբ տեղին: Այնուհանդերձ, սահմանադրական նրաշխարհի վրա կատարվող հղումը, չնայած որ դա հասկանալի է որպես մեկնարկային կետ, կարող է շփոթմունք պատճառել օրենքը կիրարկողներին, քանի որ դա միայն վերաբերում է «քաղաքացիների» կողմից այդ ազատության իրականացմանը՝ «քաղաքացի» բառի նեղ իմաստով:³³ Պարզ է դառնում, որ 2-րդ հոդվածում փորձ է արվում՝ սահմանելու օրենքի տարբեր դրույթներում օգտագործվող «քաղաքացիներ» հասկացությունն այնպես, որպեսզի դա ներառի օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, և կարելի է կարծել, որ դրա հետևանքով սահմանադրական դրույթի ավելի նեղ շրջանակը կարող է կորցնել նշանակությունը: Դժբախտաբար, 2-րդ հոդվածում տեղ է գտել այնպիսի ձևակերպում, որի հետևանքով պարզ չէ, թե՞ արդյոք օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք կարող են մասնակցել հավաքներին՝ դրանք կազմակերպելու իրավունք ունենալուց զատ (տես 9-րդ կետը): Չնայած որ միջազգային չափանիշներով որոշ դեպքերում թույլատրելի է հավաքներ կազմելու ազատության նկատմամբ ավելի խիստ սահմանափակումների կիրառումը ոչ քաղաքացիների, քան քաղաքացիների նկատմամբ, այնուհանդերձ, այդ չափանիշները չեն թույլատրում հավաքներ կազմելու ազատության իրականացման նկատմամբ ընդհանուր արգելք ոչ քաղաքացիների

³³ Արտասովոր չէ, որ այն հասկացությունը, որի անգլերեն թարգմանության դեպքում օգտագործվում է «citizen» (քաղաքացի) բառը, իմաստով ներառում է բոլոր ֆիզիկական անձանց, այլ ոչ՝ միայն տվյալ օրենքի ընդունման նրկրի քաղաքացիություն ունեցողներին: Այնուհանդերձ, Հայաստանի Սահմանադրության 26-րդ հոդվածի բնօրինակում, ըստ նրկույթին, այդ բառը նշված իմաստը չունի, քանի որ ողջ Սահմանադրությունը դեպի անգլերեն թարգմանողներն օգտագործել են «յուրաքանչյուր ոք» բառն այն դեպքերում, երբ դա վերաբերում է բոլոր ֆիզիկական անձանց:

պարագայում:³⁴ Անշուշտ, անհավանական է, որ օրենքի նախագիծն այդպիսի արգելք սահմանելու նպատակ է հետապնդում, հատկապես հաշվի առնելով 3-րդ հոդվածում տեղ գտած դրույթն այն մասին, որ միջազգային համաձայնագրերը պետք է գերակայեն տվյալ օրենքի դրույթների նկատմամբ (տես 16-րդ կետը), սակայն միանշանակ կերպով անհրաժեշտ է հստակեցնել այդ դրույթը, որպեսզի չառաջանա այն տպավորությունը, թե ոչ քաղաքացիները չեն կարող հենվել տվյալ օրենքի նախագծի դրույթների վրա: 2-րդ հոդվածի դեպքում անհրաժեշտ փոփոխությունը քննարկված է ստորև (տես 9-րդ կետը), սակայն 1-ին հոդվածի դեպքում ցանկալի կլիներ, որպեսզի ուղղակիորեն նշվեր, որ օրենքի նպատակն է ապահովել հավաքներ կազմելու ազատության իրավունքի իրականացումը քաղաքացիների, ինչպես նաև ոչ քաղաքացիների կողմից. նույնիսկ եթե հասկացություններ սահմանող դրույթի թերացումները շտկվեն, այդ դրույթը օրենքի տեքստում հերթականության իմաստով գալիս է 1-ին հոդվածից հետո, որը կարող է թյուր տպավորություն ստեղծել օրենքի նախագծի գործողության շրջանակների մասին: Ցանկացած դեպքում, հարկ է նշել, որ օրենքի նախագծի բովանդակությունը սահմանադրական երաշխիքից ավելի լայն է մեկ այլ իմաստով. օրենքի նախագիծը կանոնակարգում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող հավաքները, և այս առումով ցանկալի կլիներ ուղղակիորեն նշել, որ երաշխիքի կատարումը նպատակի միայն մի մասն է:

7. Չնայած որ նպատակների ընդհանուր շարադրանքն օգտակար կողմնորոշիչ դեր է կատարում հետագա դրույթների համար, դրանց մանրամասնումը երկրորդ մասի մեջ, ըստ երևույթին, անհրաժեշտ և ցանկալի չէ: Պատճառն այն է, որ դա կրկնում է 2-րդ հոդվածը (որն առավել լիարժեքորեն սահմանում է օրենքի գործողության շրջանակները) և առաջ քաշում հասկացությունների սահմանման որոշ տարրեր («բաց», «հրապարակային միջոցառում» և «նստացույցեր»), ինչպես նաև օգտագործում փոխարինող եզրույթներ (անգլերենում՝ «parades» (երթեր/շքերթներ), որպես ակնհայտ հոմանիշ «rallies» (երթեր) բառի փոխարեն³⁵): Այս ամենի հետևանքով օրենքի նախագիծը կարող է պակաս հասկանալի դառնալ, քան պետք է լինի ժողովրդավարական հասարակության մեջ հիմնարար կարևորություն ունեցող նման փաստաթուղթը: Անշուշտ, ավելի հստակ կլիներ, եթե հասկացությունների սահմանման բոլոր փորձերը տեղ գտնեին այդ նպատակով առանձնացված մեկ դրույթի մեջ, որը պետք է անմիջապես հետևեր 1-ին հոդվածին, որպեսզի անհրաժեշտ չլիներ հասկացությունների սահմանման փորձեր կատարել բուն դրույթների սկզբնական մասերում: Սա կնշանակեր, որ «բաց», «հրապարակային միջոցառում» և «նստացույց» հասկացությունների սահմանումները կգումարվեին ներկայիս 4-րդ հոդվածին (որը քննարկված է սույնի 17-20-րդ կետերում), և այդ լրամշակված հոդվածը կդառնար 2-րդ հոդված: Ինչ վերաբերում է «երթեր» բառի երկու տարբերակների (անգլերեն «parades» և «rallies») օգտագործման անհրաժեշտությանը³⁶, ապա դա պետք է արվի ողջ օրենքի տեքստում, որպեսզի որևէ անորոշություն չծագի «երթեր» («rallies») բառի օգտագործման կապակցությամբ: Այդ դեպքում բավարար կլիներ, եթե 1-ին հոդվածի երկրորդ մասում նշվեր, որ «սույն օրենքը սահմանում է այնպիսի հանրահավաքների, միտինգների, երթերի և ցույցերի կազմակերպման և անցկացման

³⁴ ՄԻԵԿ-ի 16-րդ հոդված. տես *Պիերոնտն ընդդեմ Ֆրանսիայի* գործով Դատարանի դատավճիռը, 1995թ. ապրիլի 27:

³⁵ Սա կարող է թարգմանության խնդիր լինել, սակայն անգլերենում երթերը և ցույցերը հոմանիշներ չեն, քանի որ երթերը շարժվող ակցիաներ են, իսկ ցույցերը՝ ստատիկ հավաքներ:

³⁶ Պարզ չէ, թե արդյոք «երթ»/շքերթ??? ('march') բառը որոշ դրույթներում պարզապես թարգմանության մեջ օգտագործված այլ բառ է՝ հայերեն միևնույն բառի փոխարեն, թե արդյոք դա իսկապես լրիվ նոր հասկացություն է:

իրավական դաշտը և կարգը, որոնց նկատմամբ կարող են կիրառվել սահմանափակումներ, ինչպես նաև մասնակիցների և պետական կառավարման ու տնտեսական ինքնակառավարման մարմինների իրավունքները և պարտականությունները»³⁷: Իրականում կարիք չկա՝ կրկին նշելու, որ օրենքի նախագիծը վերաբերում է միայն «յապադա, անգն» միջոցառումներին, քանզի այդ միտքն առանց այն էլ բավականաչափ պարզ է 1-ին կետից: Պետք չէ հղում կատարել «ընդհանուր հասարակական օգտագործման տարածքների» նկատմամբ օրենքի նախագծի դրույթների կիրառությանը, քանզի 2(3) և 4-րդ հոդվածներից պարզ է, որ օրենքի դրույթների առնվազն մի մասը վերաբերում է նաև «ընդհանուր հասարակական օգտագործման տարածքներ չհամարվող տարածքներում» անցկացվող միջոցառումներին:

Նորվաժ 2

8. Այս հոդվածի նպատակն ամբողջությամբ տեղին է, քանզի այն սահմանում է, թե օրենքի նախագծի պահանջներն ինչի նկատմամբ են տարածվում, իսկ ինչի նկատմամբ՝ ոչ: Ինչպես արդեն նշվեց, այս հոդվածը շատ անգամ ավելի պարզ կդառնար, եթե դրան նախորդեր օգտագործվող հիմնական հասկացությունների սահմանումներ տվող հոդված: Բացի այդ, ինչպես և 1-ին հոդվածի երկրորդ մասի դեպքում (տես սույն եզրակացության 7-րդ կետը), դրույթը մի փոքր ապակողմնորոշող է, քանզի օրենքի նախագծի գործողության շրջանակները չեն սահմանափակվում միայն «ընդհանուր հասարակական օգտագործման վայրերում կազմակերպվող հրապարակային միջոցառումներով», և հետագա դրույթներից պարզ է դառնում, որ օրենքը կարող է վերաբերել նաև օրենքի նախագծի իմաստով ոչ հասարակական համարվող վայրերում անցկացվող միջոցառումների (տես կետ 12), իսկ այս հոդվածի դրույթները վերաբերում են նաև «ոչ ընդհանուր հասարակական օգտագործման տարածքներ համարվող տարածքներին» (տես կետ 14): Ակնհայտաբար, անհրաժեշտ է ավելի հստակորեն և ճշգրտորեն սահմանել այս դրույթը: Այնուհանդերձ, այս դրույթը պետք է չորս այլ հարցերի նույնպես անդրադառնա: Առաջինը վերաբերում է այն անձանց, ովքեր իրավասու են մասնակցել օրենքի նախագծով կարգավորվող միջոցառումներին: Երկրորդը վերաբերում է այն կազմակերպություններին, որոնք իրավասու են այդպիսի միջոցառումներ կազմակերպել: Երրորդը վերաբերում է այն հարցին, թե որոշ նպատակներ ինչպես են ձևակերպվում որպես «էական» նպատակներ դրույթների կիրառելիությունը պարզելու իմաստով: Չորրորդը ծագում է այն փաստից, որ իրազեկման պահանջից նախատեսվող բացառությունը հստակորեն սահմանված չէ: Հինգերորդը վերաբերում է դրա հետևանքով արգելքի կիրառման վերաբերյալ ձևակերպմանը:

9. 1-ին պարբերությամբ նախատեսվում է, որ օրենքի նախագծի դրույթները տարածվում են կամ տարբեր մասնավոր և հանրային իրավունքի սուբյեկտների կամ «քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ «քաղաքացիներ»)» կողմից կազմակերպվող որոշակի միջոցառումների նկատմամբ: Այնուհանդերձ, այս ձևակերպումը կարելի է թյուրմեկնաբանման ենթարկել երկու առումներով, որոնք անհամատեղելի կլինեն միջազգային չափանիշներով երաշխավորվող հավաքներ կազմելու ազատության սկզբունքներին: Առաջին հերթին, առնվազն անգլերեն տեքստում, որակավորումը («այսուհետ՝ «քաղաքացիներ»)» կարող է համարվել միայն «քաղաքացիություն չունեցող անձանց» վերաբերող որակավորում: Երկրորդ, կարելի է կարծել, որ հասկացության սահմանումը

³⁷ Այս նախադասության վերջին մասը (սկսվում է «և իրավունքները...» բառերով) իրականում անհրաժեշտ չէ, քանի որ դա բխում է առաջին երկու մասերից:

վերաբերում է «քաղաքացի» հասկացության օգտագործմանը միայն միջոցառումների կազմակերպման, սակայն ոչ՝ դրանցում մասնակցության դրույթների մասով: Չնայած որ խիստ կասկածելի է, թե նման մտադրություն որևէ դեպքում եղել է հեղինակների մոտ, և հնարավոր է, որ հայերեն բնօրինակի տեքստում նման անորոշություններ չեն առաջանում, այնուհանդերձ, նշված մեկնաբանումը կարող է առաջ քաշվել նրանց կողմից, ովքեր ցանկանում են սահմանափակել հավաքներ կազմելու ազատության իրականացումը կոնկրետ դեպքում, և որոշ ժամանակ կարող է պահանջվել այս հարցին գոհացուցիչ լուծում տալու համար: Հետևաբար, ցանկալի կլիներ, որպեսզի դրույթի այս մասը տեղափոխվեր հասկացությունների սահմանման վերաբերյալ հոդված (տես սույնի 17-20-րդ կետերը), որն էլ դրա համար ավելի հարմար տեղ կլիներ, և վերաձևակերպվեր, որպեսզի «քաղաքացի» հասկացությունն օրենքի նախագծի բոլոր դրույթներում վերաբերեր ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այլ նաև օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

10. Արտասովոր է, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է այնպիսի փաստաթղթում, ինչպիսին է օրենքի նախագիծը, առանձնացվեն որպես օրենքի նախագծի շրջանակների մեջ մտնող միջոցառումներ կազմակերպելու իրավասություն ունեցող սուբյեկտներ, թեկուզ այն պատճառով, որ նշված մարմիններին ընդհանուր առմամբ վերապահվում է կանոնակարգիչ դեր: Այնուհանդերձ, սա ծանր պրոբլեմ չէ և, իսկապես, բացի այն դեպքից, երբ կասկած է ծագում կանոնակարգիչ գործառույթի իրականացման վերաբերյալ այնպիսի իրավիճակում, որում այդ մարմինները նաև կազմակերպիչներն են, դրույթն իմաստավորվում է այնքանով, որքանով դա նշված մարմինների նկատմամբ սահմանում է նույն կանոնները, որոնք տարածվում են բոլորի նկատմամբ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է որոշակի պարզաբանում մտցնել «կազմակերպություններ» հասկացության իմաստի մեջ: Հաշվի առնելով, որ ուղղակիորեն խոսվում է «պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների» մասին, ենթադրվում է, որ խոսք է գնում ոչ կառավարական կազմակերպությունների մասին, սակայն անհրաժեշտ է սահմանել, թե արդյոք դրանք սահմանափակվում են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններով, թե ներառում են նաև ավելի շատ ոչ ֆորմալ բնույթ ունեցող կազմակերպությունները, որոնք դեռևս իրավաբանական անձի կարգավիճակ չեն ստացել: Անձանց այս երկու տեսակները դուրս թողնելը պրոբլեմահարույց չէր լինի, եթե դրանց թույլատրվեր հավաքներ կազմակերպել օրենքի՝ առանձին քաղաքացիներին այդ իրավունքը վերապահող դրույթների հիման վրա: Այնուհանդերձ, եթե դա հնարավոր չէ, ապա նրանց իրավունակության նշված սահմանափակումը, հավանական է, սկզբունքորեն կհամարվի անարդարացված միջամտություն հավաքներ կազմելու ազատությանը, որը նրաշխարհում է միջազգային չափանիշներով:³⁸

11. Օրենքի նախագծի գործողության տակ մտնող միջոցառումների հասկացության սահմանման մեջ 1-ին պարբերությունն առանձնացնում է դրանց կազմակերպման որոշ նպատակներ՝ որպես հիմքեր: Վերջիններս բավական լայն են և, հաշվի առնելով «այլ կարիքներ, պրոբլեմներ և հարցեր» արտահայտության չսահմանափակող բնույթը, այդ հիմքերի թվարկումը կարելի է, թերևս, համարել սկզբունքորեն ոչ սպառիչ: Մա կարևոր է, քանի որ հավաքներ կազմելու ազատությանը կհակասեր, եթե անհնար լիներ հավաք կազմակերպել միայն այն պատճառով, որ դրա

³⁸ Տես *Ստանկովը և «Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի*, Դատարանի 2001թ. հոկտեմբերի 2-ի դատավճիռը, և 94 DR 68 (1998):

նպատակը նախատեսված չէր լինի թվարկվածների շարքում, այսինքն, օրինակ, երբ նպատակը շրջակա միջավայրին պատճառվող վնասների դեմ բողոքի ցույց անցկացնելն է, չնայած որ այդ նպատակն իրենով չի հակասում ժողովրդավարության և օրենքի գերիշխանության սկզբունքներին:³⁹ Այնուհանդերձ, ցանկալի կլիներ, եթե դրույթը սահմանափակվեր կարծիք հայտնելու և տեղեկատվություն կամ գաղափարներ փնտրելու, ստանալու կամ տարածելու նպատակով, որպեսզի հնարավոր լիներ խուսափել հավաքներ կազմելու ազատության իրավունքի իրավաչափ իրականացումը խոչընդոտող հնարավոր թյուր մեկնաբանությունից:

12. Ավելին, անհրաժեշտ է առավել հստակեցնել 2-րդ պարբերության մեջ տեղ գտած նպատակները, քանզի դրանց հիման վրա է որոշվում, թե՞ արդյոք կոնկրետ զանգվածային միջոցառման համար նախատեսվող կանոնակարգիչ հսկողությունը սահմանափակվելու է հանրային կարգուկանոնի և ճանապարհային երթևեկության կանոնների պահպանմամբ և արգելքի իրավասությամբ, թե՞ արդյոք դրանից բխելու է նաև համապատասխան համայնքապետի կամ Երևանի քաղաքապետի համաձայնությունը նախապես ստանալու անհրաժեշտությունը, ընդ որում, այդ համաձայնությունը պետք է անհրաժեշտ լինի միայն այն դեպքում, երբ մտադրություն կա տոնակատարությունը, ծիսակատարությունը, մշակութային կամ սպորտային միջոցառումներն անցկացնել կոնկրետ սահմանված վայրերում՝ ի տարբերություն ընդհանուր հասարակական օգտագործման տարածքների: Իհարկե, հնարավոր է, որ «տոնակատարություն, ծիսակատարություն, մշակութային կամ սպորտային միջոցառումներ» հասկացության տակ մտնող որոշ երևույթներ միևնույն ժամանակ նաև ծառայեն որպես առաջին պարբերության մեջ թվարկված հարցերի շուրջ կարծիքի արտահայտման միջոց, և որ ինչ-որ մեկի կարծիքն այն մասին, որ իրենք կազմակերպում են միջոցառումներ կամ մասնակցում դրանց, չհամընկնի իրավապահ և այլ պետական պաշտոնյաների կարծիքներին: Հետևաբար, կանոնակարգման ավելի մեղմ տեսակի ենթակա երևույթների շրջանակները պետք է առավել ճշգրտորեն ձևակերպվեն: Այնուհանդերձ, հնարավոր է, որ այս տարբերակված վերաբերմունքը զանգվածային միջոցառումների կանոնակարգման նկատմամբ դիտարկվի նաև որպես խտրականություն առանց որևէ բանական կամ օբյեկտիվ հիմնավորման, որը կհակասի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածին և, հավաքներ կազմելու ազատության հետ միասին վերցվելու դեպքում, նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածին: Անշուշտ, բազմաթիվ «տոնակատարություններ, ծիսակատարություններ, մշակութային կամ սպորտային միջոցառումներ» դժվար թե՞ որևէ մտահոգություն պատճառեն հասարակական կարգուկանոնի պահպանման առթիվ, սակայն դրանց մի մասը կարող է հակասական լինել, իսկ մյուս մասը՝ պրոբլեմահարույց՝ պայմանավորված պարզապես դրանց մասնակիցների թվաքանակով: Նման դեպքում պարզ չէ, թե՞ ինչու չի պահանջվում նախապես իրազեկել կամ թույլտվություն ստանալ⁴⁰, առաջնորդվելով պարզապես այն պատճառաբանմամբ, թե՞ նպատակը կարծիք հայտնելը կամ տեղեկատվություն կամ գաղափարներ փնտրելը, ստանալը և տարածելը չէ: Այնքանով, որքանով տարբերակված վերաբերմունքի լուրջ հիմնավորում հնարավոր չէ առաջադրել, այս դրույթն օրենքի նախագծում չպետք է պահպանվի: Հարկ է նաև նշել, որ բացատրված չէ, թե՞ «տոնակատարությունները, ծիսակատարությունները, մշակութային կամ սպորտային միջոցառումները» ինչու են մեխանիկորեն դասակարգվում որպես «այլ զանգվածային միջոցառումներ» չնայած որ

³⁹ Տես *Ռեֆահ Պարտիզին («Բարոյության կուսակցությունը») ընդդեմ Թուրքիայի*, Դատարանի 2003թ. փետրվարի 13-ի դատավճիռը:

⁴⁰ Ինչ վերաբերում է դրանցից որևէ մեկի և հավաքներ կազմելու ազատության համատեղելիությանը, տես կետեր 45-58:

«զանգվածային հրապարակային միջոցառում» հասկացության 4(3) հոդվածում տեղ գտած սահմանումից հետևում է, որ առնվազն 100 հոգի պետք է մասնակցի, և պարզ չէ, թե ինչու պետք է այդքան մարդ պահանջի տոնակատարություններին և այլն: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է որոշակի հստակեցում մտցնել այս դրույթի կամ հասկացությունների սահմանումներ տվող հոդվածի մեջ:

13. Պետք է նաև մտահոգվել այն մասին, թե տվյալ հոդվածի դրույթներն ինչպես են ազատում որոշ միջոցառումներ իրազեկման/թույլտվության պահանջից, մինչդեռ որոշ այլ միջոցառումներ նախատեսվում են 10-րդ հոդվածով (տես 46-րդ կետը): Ակնհայտ է, որ անհրաժեշտ է այս հարցն առավել միասնական կարգավորման ենթարկել, և օրենքի նախագիծն անհրաժեշտ է վերանայել տվյալ ուղղությամբ:

14. Դրույթը, որից բխում է, որ իրազեկման/թույլտվության պահանջը չի կիրառվում մասնավոր սեփականություն համարվող տարածքներում անցկացվող հավաքների նկատմամբ, այսինքն, «ընդհանուր հասարակական օգտագործման» տարածքի հասկացությունը, որոշ չափով պարզ չէ (տես 18-րդ կետը), և դա նույնպես պետք է անդրադառնա արգելքների դեպքի նկատմամբ. այն փաստը, որ սեփականատերը կամ օգտագործողն են որոշելու, թե արդյոք կարելի է այդտեղ հավաք անցկացնել, ողջունելի և ցանկալի դրույթ է՝ ուղղված կարգավորիչ հսկողության մեղմմանը: Այնուհանդերձ, այս ազատության հետ կապված վերապահումը, մասնավորապես՝ 9-րդ և 13-րդ հոդվածներով նախատեսված՝ հրապարակային միջոցառումներ անցկացնելու սահմանափակումների և զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու արգելքի վերաբերյալ դրույթների կիրառումը տվյալ ազատության նկատմամբ ընդունելի է միայն այն դեպքում, երբ նշված դրույթների հետ կապված խնդիրները լուծված կլինեն (տես սույնի 38-44-րդ և 59-70-րդ հոդվածները):⁴¹ Բացի այդ, այն փաստը, որ իրազեկում/թույլտվություն չի պահանջվում մասնավոր տարածքում անցկացվող միջոցառումների դեպքում, միայն լրացուցիչ չափով հիմնավորում է տպավորությունն այն մասին, որ պահանջը վերաբերում է ոչ բոլոր զանգվածային միջոցառումներին, որը հանգեցնում է անարդարացի խտրականության:

15. Չորրորդ պարբերությամբ նախատեսված դրույթը «հասարակական և այլ զանգվածային միջոցառումների» արգելման և դադարեցման վերաբերյալ, ենթադրաբար, վերաբերում է այն միջոցառումներին, որոնք կազմակերպվել կամ անցկացվում են 2-րդ և 3-րդ պարբերությունների, այլ ոչ՝ երրորդ և չորրորդ պարբերությունների խախտմամբ: Օրենքի նախագծի պահանջների խախտումների կապակցությամբ այդ հետևանքների փաստացի հիմնավորվածությունը քննարկվում է ստորև (տես 59-74-րդ կետեր): Այնուհանդերձ, հարկ է նշել, որ սույն հոդվածը որևէ դրույթ չի նախատեսում հրապարակային միջոցառումների վերաբերյալ, բացի այն դրույթից, որ «տոնակատարությունների, ծիսակատարությունների, մշակութային կամ սպորտային միջոցառումների» համար անհրաժեշտ է իրազեկում կատարել/թույլտվություն ստանալ, և սա առաջացնում է այն տպավորությունը, թե հասարակական բնույթի բոլոր այլ միջոցառումների դեպքում, անկախ դրանց զանգվածային լինելու կամ չլինելու պարագայից, պահանջվում է նման իրազեկում/թույլտվություն: Այնուհանդերձ, ինչպես 10(1) հոդվածում է պարզ դառնում (տես սույնի 46-րդ կետը), իրազեկում/թույլտվություն չի պահանջվում ոչ զանգվածային հրապարակային միջոցառումների դեպքում, և ստացվում է, որ օրենքի տարբեր մասեր

⁴¹ Թերևս, տարօրինակ է, որ դադարեցման մասին դրույթները նաև դրանց նկատմամբ չեն տարածվում:

իրարամերժ տպավորություններ են առաջացնում: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է որոշակի պարզաբանում մտցնել և վերացնել ներքին հակասություններն այս ոլորտում:

Նորվաժ 3

16. Առաջին պարբերության մեջ տեղ գտած դրույթը հրապարակային միջոցառումներ կարգավորող նորմերի իրավունքի աղբյուրների մասին իրենով պրոբլեմահարույց չէ, չնայած որ հարկ է նշել, որ այն թերի է, քանզի խոսում է միայն «հրապարակային միջոցառումների» մասին և, ինչպես տեսանք (վերոհիշյալ 8-րդ կետից), օրենքի նախագիծը մի փոքր ավելի լայն շրջանակներ ունի: Ավելին, դա կարող էր համարվել բարենպաստ դրույթ, քանզի, ըստ նրևույթին, սահմանում է իրավունքի այն դրույթների սպառիչ ցանկը, որոնք կարող են գործի գցվել հրապարակային միջոցառումների կանոնակարգման ուղղությամբ. հետևաբար, դա կարող էր իրավունքի կանխատեսելիությանը նպաստող դրույթ համարվել, եթե չլինեին որոշ էական բացթողումներ, ինչպիսիք են, օրինակ, Հայաստանի Հանրապետության 1985թ. դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքը և ոստիկանության իրավասությունների վերաբերյալ օրենսդրությունը: Յանկացած պարագայում, ավելի տեղին կլիներ այս դրույթը ներառել 1-ին հոդվածում, քան օրենքի գործողության շրջանակները սահմանող դրույթից հետո: Սա հավասարապես վերաբերում է 2-րդ պարբերությանը, որը սահմանում է «միջազգային պայմանագրերի» դրույթների հիերարխիկ գերակայությունն օրենքի նախագծի դրույթների նկատմամբ, քանզի միջազգային պայմանագրերն այս դեպքում ընկալվում են ավելի շատ որպես համաձայնագրեր, քան որպես միջազգային այլ հանձնառություններ, ինչպիսիք են, օրինակ, ԵԱՀԿ-ի անդամակցության շրջանակներում ստանձնված հանձնառությունները: Սկզբունքորեն այս դրույթը ողջունելի է, սակայն դրա պոտենցիալ կարևորությունը չպետք է գերազանցահատել, քանզի դա էապես կախված կլինի թե վարչակազմի, դատարանների և անհատների իմացության աստիճանից, թե այդ պայմանագրերի պահանջներից և դրանք կիրառելու փաստացի պատրաստակամությունից: Բացի այդ, նշված պահանջների գերակայության դեպքը, ամենայն հավանականությամբ, առաջ է գալիս այն ժամանակ, երբ բողոքարկվել է դրանց հակասող կոնկրետ գործողությունը կամ որոշումը և, չնայած որ դա հավաքներ կազմելու ազատությունը և հարակից իրավունքներն արհամարհելու փորձերի դեմ լուրջ երաշխիք կարող է լինել, այնուհանդերձ, բոլոր այդ իրավունքների հարգումը պրակտիկայում շատ ավելի հավանական է, եթե կանոնակարգման պատասխանատուներն իրենց ամենօրյա գործունեության մեջ առաջնորդվում են հստակորեն ձևակերպված կանոններով:

Նորվաժ 4

17. Արդեն նշվեց, որ 4-րդ հոդվածի այն դրույթները, որոնք վերաբերում են օրենքի նախագծում օգտագործված հասկացությունների սահմանմանը, ոչ միայն թերի են (տես վերոհիշյալ 7-րդ կետը), այլ նաև հայտնվել են սխալ տեղում (տես վերոհիշյալ 9-րդ կետը): Բացի այդ, արդեն նշվեց, որ «հրապարակային միջոցառում» հասկացության սահմանումը դրա նպատակից կախվածության մեջ դնելը կարող է պրոբլեմներ առաջացնել (տես վերոհիշյալ 11-րդ կետը), և որ որոշ դեպքերում հնարավոր է, որ «երթ»/շքերթ (անգլերեն «parade») բառը շփոթվի դրա հոմանիշի՝ «երթ» (անգլերեն «rally») բառի հետ (տես վերոհիշյալ 7-րդ կետը), քանզի այդ երկուսից միայն վերջինն է փաստացի սահմանված: Այնուհանդերձ, մի շարք պրոբլեմներ կարող են ծագել այդ հոդվածում տեղ գտած առանձին հասկացությունների սահմանումների կապակցությամբ: Նախևառաջ, 1-ին պարբերության մեջ մի քանի հասկացություններ են օգտագործված, չնայած որ իրականում միայն մեկն է անհրաժեշտ. ինչպես և «երթ» բառի երկու տարբերակների դեպքում («parade» և «rally»), մեկ երևույթի մասին խոսելիս

բազմազան եզրույթների կիրառությունը, որոնք բոլորն առնվազն անգլերենում ունեն մի փոքր տարբերվող ենթախմաստներ, կարող է շփոթություն պատճառել, հատկապես այն դեպքում, երբ դրանք բոլորը հավաքաբար նկարագրելու համար օգտագործված է մեկ այլ հասկացություն՝ «հրապարակային միջոցառում»: Երկրորդ, ցանկալի կլիներ հստակեցնել, թե՞ արդյոք անձանց հասարակական միջոցառման բերելու նպատակով տրանսպորտի օգտագործումը մտնում է «ներթեր» հասկացության սահմանման տակ, քանզի 2-րդ պարբերության մեջ նշվում է, որ «դրանք կարող են իրականացվել նաև տրանսպորտային միջոցներով»: Նման լայն ձևակերպումը կարող է լուրջ դժվարություններ առաջացնել բողոքի ակցիաների կազմակերպման դեպքում, հատկապես երբ առանձին խմբերի մեկնարկային կետերը կարող են հայտնի չլինել այնքան վաղորոք, որպեսզի դրանց մասին իրազեկում տրվի/թույլտվություն ստացվի (տես սույնի 45-50-րդ կետերը): Կանոնակարգման տեսակետից ավելի տեղին կլիներ, եթե երևույթը համարվեր տրանսպորտով իրականացվող երթ միայն այն դեպքում, երբ սկզբում տեղի է ունեցել այդ նպատակով օգտագործվող տրանսպորտային տարբեր միջոցների հավաք:

18. Երրորդ, հնարավոր է անորոշություն 5-րդ պարբերության մեջ տեղ գտած «ընդհանուր հասարակական օգտագործման տարածք» հասկացության սահմանման կապակցությամբ, քանզի այս հասկացությունը բնորոշվում է որպես «պետական կամ համայնքային սեփականություն համարվող բաց տարածք», և «համարվող» բառը, ենթադրելով, որ դա հայերեն տեքստի համարժեք վերաձևակերպում է, վիճաբանության չափազանց մեծ հնարավորություն է ստեղծում այն մասին, թե՞ կոնկրետ տարածքն ինչ պետք է համարվի, հատկապես եթե սեփականության վեճ գոյություն ունի, և ցանկալի կլիներ, եթե «համարվող» բառը փոխարինվեր «պատկանող» բառով: Բացի այդ, տեղին կլիներ լրացուցիչ ճշգրտել պահանջն այն մասին, որպեսզի բաց տարածքը լինի այնպիսի տարածք, որի կապակցությամբ գոյություն ունի «անարգել մուտք այդ տարածք կամ ներկայություն դրա վրա, որը չի խոչընդոտվում կամ սահմանափակվում». ճիշտ է, կարող է պարզ լինել, թե՞ որ տարածքի վրա ներկայությունն է արգելված, անհրաժեշտ կլիներ պարզաբանել, թե՞ արդյոք իսկապես կան բազմաթիվ այնպիսի տարածքներ, որոնց վրա ներկայությունը սահմանափակված չէ, եթե հավաքներ կազմելու ազատության որևէ հեռանկար կա, քանի որ ներկայության հնարավոր ժամկետը կարգավորող նորմերի գոյությունն արդեն կարող է արգելք հանդիսանալ՝ այդ կերպ դուրս թողնելով տվյալ տարածքը «ընդհանուր հասարակական օգտագործման տարածք» հասկացությունից:

19. Չորրորդ, 7-րդ պարբերության մեջ նախատեսված «մասնակից» հասկացության սահմանումը, որը վերաբերում է այն անձանց, ովքեր «ձգտում են իրենց կարծիքը հայտնել», ի լրումն հասարակական միջոցառման վայր գալու կամ այնտեղ ներկա գտնվելուն, հարց է առաջացնում այն մասին, թե՞ ինչ տվյալներ են պետք՝ ապացուցելու, որ անձն արտահայտել է իր կարծիքը. արդյո՞ք պահանջվում է, որպեսզի անձը փաստացի բառեր արտաբերի՝ կողմ կամ դեմ, թե՞ ժեստերն արդեն բավարար կլինեն, կամ, ինչպե՞ս վերաբերվել նրան, ով ներկա է, սակայն չի արտահայտվում: Անհրաժեշտ է հստակեցնել, քանի որ վտանգ կա, որ անձը, ով պարզապես ներկա է, կարող է «մասնակից» համարվել, չնայած իր ներկայության պատահական լինելուն, կամ իր՝ միայն դիտորդի դերում գտնվելուն (լրատվամիջոցներում աշխատողների կամ ուրիշների դեպքում), և սա կարող է լուրջ խնդիր առաջացնել այն դեպքերում, երբ գործը վերաբերում է իրավախախտումներին և ցրումներին: Բացի այդ, պարզ չէ, թե՞ «եկած լինելով» հասկացությունն ինչ է ավելացնում «ներկա» բառին, և երկու հասկացությունների օգտագործումը կարող է դժվարացնել անձի՝ մասնակից լինելու հանգամանքի պարզումը:

20. 6-րդ պարբերության մեջ տեղ գտած՝ կազմակերպչի հասկացության սահմանումը բավականաչափ հստակ է, սակայն սրա սահմանափակումը «քաղաքացիների» պարագայում «լիովին իրավունակ» անձանցով քննարկվում է ստորև (տես 39-րդ կետը):

Իրավունքները և պարտավորությունները

Նորվաժ 5

21. Տեղին է 1-ին պարբերության մեջ տեղ գտած դրույթն ուղղակիորեն այն մասին, թե ով է իրավասու՝ կազմակերպելու և անցկացնելու հրապարակային միջոցառումը, չնայած որ նախընտրելի կլիներ նաև նշել, որ դրա նկատմամբ տարածվում են 9-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները, որոնք քննարկվում են ստորև (տես 38-44-րդ կետերը): Չնայած որ դա չպետք է խստորեն պահանջել, այնուհանդերձ, պարզ է, որ այն դեպքում, երբ իրավունքները սահմանվում են օրենքով, ապա երրորդ պարբերության մեջ տեղ գտած արտահայտությունը, օրինակ, («պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու չեն խոչընդոտել հրապարակային միջոցառումների իրագործումը կամ միջամտել դրանց իրագործմանը...բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի») նաև որոշ ուսուցողական արժեք ունի: Այնուհանդերձ, այն փաստը, որ այս արգելքը կիրառվում է նաև «քաղաքացիների և կազմակերպությունների» նկատմամբ, կարող է պրոբլեմատիկ լինել, քանի որ դրա հետևանքով հակացուցի իրավաչափ ձևերը կարող են գործնականում անհնար դառնալ, հատկապես երբ այդ դրույթն ընթերցվի այն իրավասության հետ միասին, որը թույլ է տալիս անձանցից պահանջել, որպեսզի նրանք լքեն հրապարակային միջոցառումը, որը քննարկված է ստորև (տես 36-րդ կետը): Անշուշտ, անհրաժեշտ է կանխել հասարակական միջոցառման խաթարումը, և տվյալ դրույթը խնդրահարույց չէր լինի, եթե օրենքի նախագծով նաև ուղղակիորեն ճանաչվեին հակացուցի մասնակիցների իրավունքները (տես նաև 41-րդ և 43-րդ կետերը):

22. 4-րդ և 5-րդ պարբերությունների դրույթներն այն մասին, որ կազմակերպության գործադիր մարմինը և պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները կամ նրանց կողմից լիազորված անձինք կարող են որպես կազմակերպիչներ հանդես գալ, իրենով խնդրահարույց չէ: Ավելին, վեցերորդ պարբերության մեջ տեղ է գտել ողջունելի դրույթ այն մասին, թե ինչպես պետք է հասարակական միջոցառման անցկացումից առաջ կազմակերպիչը փոխվի, քանզի, չնայած որ դա մեծ մասամբ պրոբլեմ չի կարող առաջացնել, հնարավոր է նաև այն դեպքը, երբ կազմակերպիչը կհիվանդանա կամ անկարող կլինի ներկա գտնվել ընտանեկան կամ անձնական հրատապ պատճառների բերմամբ (օրինակ, մահվան դեպք կամ ծանր հիվանդություն) և, համաձայն ութերորդ պարբերության, եթե փոփոխությունը հնարավոր չէ, ապա միջոցառումը չի կարող տեղի ունենալ կամ պետք է դադարեցվի (տես 23-րդ կետը): Այնուհանդերձ, չնայած որ հինգժամյա վերջնաժամկետը, թերևս, դեպքերի մեծ մասում դժվարություններ չի պատճառի, ցանկալի կլիներ ավելի մեծ ճկունություն թույլատրել, քանզի պրոբլեմներ կարող են ծագել վերջին թույլին, և կազմակերպության բնույթն այնպիսին է, որ հավանական է, որ կազմակերպության մեջ մեկից ավելի հարմար անձ կլինի, որը կկարողանա կազմակերպչի դերը ստանձնել: Բացի այդ, չնայած որ ցանկալի կլիներ ունենալ փոխարինման կարգ այն դեպքերի համար, երբ հաճախման պրոբլեմի մասին հայտնի է նախքան միջոցառման անցկացումը, անհրաժեշտ է նաև նախատեսել կամ

փոփոխություն կատարելու, կամ այնպիսի տեղակայներ առաջադրելու հնարավորությունը, ովքեր կկարողանային ստանձնել կազմակերպչի դերը վերջինիս մասնակցության անհնարինության դեպքում, նույնիսկ այն ժամանակ, երբ միջոցառումն արդեն սկսվել է, թեև ուղիղ այն պատճառով, որ դա կնպաստեր հասարակական կարգուկանոն պահպանելու վերաբերյալ օրենքի նախագծի դրույթներում արտացոլված հիմնավորված մտահոգությունների լուծմանը: Չնայած որ կազմակերպչին փոխելու հնարավորությունը, ամենայն հավանականությամբ, պետք է նախատեսել կազմակերպությունների և պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախաձեռնվող միջոցառումների դեպքում, կարելի է ենթադրել, որ այդ հնարավորությունն անհրաժեշտ կլինի նաև քաղաքացիների կողմից կազմակերպվող միջոցառումների դեպքում: Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ 11(1) հոդվածը նախատեսում է իրազեկման մեջ մի քանի քաղաքացիների անուններ նշելու հնարավորությունը (տես 51-րդ կետը), ըստ երևույթին, անհրաժեշտ չէ ունենալ առանձին դրույթ, որը կթույլատրեր կազմակերպչին փոխել, և հետևաբար, յոթերորդ պարբերությամբ նախատեսված՝ փոփոխություն կատարելու արգելքը պետք է որ խնդիրներ չառաջացնի:

23. Չնայած որ 8-րդ պարբերության մեջ տեղ գտած պահանջն այն մասին, որ կազմակերպիչը պետք է ներկա գտնվի միջոցառման մեկնարկին և դրա ողջ ընթացքում, սկզբունքորեն խնդրահարույց չէ, եթե վերոհիշյալ մտահոգությունները փարատվեն, այնուհանդերձ, հնարավոր է, որ անհրաժեշտ կլինի պարզաբանել, թե «ներկա» գտնվելն ինչ է նշանակում, հատկապես հաշվի առնելով այս պահանջի խախտման հետևանքի ծանրությունը՝ միջոցառման դադարեցումը: Անշուշտ, ողջամիտ չէր լինի, եթե կազմակերպիչը ներկա չհամարվեր այն դեպքում, երբ նա մտներ ինչ-որ շենք կամ գնար միջոցառմանը հարող փողոց մի կարճ ժամկետով՝ միջոցառման հետ կապված ինչ-որ պատճառով (օրինակ, թերթիկներ հավաքելու կամ ծագող պրոբլեմները հարթելու նպատակով): Ավելին, որոշ միջոցառումներ, հատկապես երթեր և ցույցեր, կարող են տարածվել և ընդգրկել մեծ տարածք, և պարզապես հնարավոր չէր լինի միաժամանակ ներկա գտնվել բոլոր մասերում: Հնարավոր է, որ այս խնդիրների մասին հոգալու սահմանված կարգ/պրակտիկա գոյություն ունի, սակայն եթե այդպիսին գոյություն չունի, ապա անհրաժեշտ կլինի ավելի ճշգրտորեն ձևակերպել այս պահանջը: Բացի այդ, չնայած որ սկզբունքորեն կարող է և ողջամիտ լինել այն ակնկալիքը, որ միջոցառումն առանց կազմակերպչի ներկայության կհանգի ավարտի, վերոհիշյալ դրույթի ընդունելիությունը պետք է քննարկել նաև «սպոնտանության» որոշակի արդարացված շահերի տեսակետից, որպեսզի կազմակերպիչ չունեցող միջոցառման մասնակիցներն անցկացնեն բողոքի ցույց: Այս հարցը քննարկված է ստորև (տես 48-րդ կետը):

Նորված 6

24. Անշուշտ, արդյունավետ է, երբ հավաքներ կազմելու ազատության իրականացման մասին օրենքում, ինչպես տվյալ դեպքում 6-րդ հոդվածում է, հնարավորինս հստակորեն սահմանվեն դրանց կազմակերպմանը մասնակցողների իրավունքները և պարտավորությունները: Սա հատկապես վերաբերում է միջոցառման ապագա մասնակիցներին որոշակի կարևոր տեղեկություններ տրամադրելու պարտավորությանը: Չնայած որ այս խնդիրը շատ առումներով լուծվում է, մնում են որոշ հարցեր, որոնք լրացուցիչ ուշադրության կարիք ունեն թե իրավունքների, թե պարտավորությունների մասով:

25. 1-ին պարբերությամբ նախատեսված իրավունքների կապակցությամբ հինգ խնդիրներ են ծագում: Առաջինը, եթե նույնիսկ կոռեկտ է դրույթն այն մասին, որ

կազմակերպիչը կարող է առաջարկել միջոցառման վայրը, իրականում չի կարող ստույգ լինել առաջին պարբերության ձևակերպումն այն մասին, որ նա «որոշում» է միջոցառման անցկացման վայրը, քանզի այդ կապակցությամբ գործում է իրազեկման/թույլտվության պահանջը: Այս հսկողության ընդունելիությունը քննարկված է ստորև (տես 53-րդ կետը), սակայն, անկախ թե ինչպիսի մոտեցում կորդերվի այդ կապակցությամբ, ցանկալի չէ այս կերպ ապակողմնորոշող տպավորություն առաջացնել, քանզի այդ տպավորության ազդեցության ներքո որոշակի գործողություններ կատարողները կարող են հայտնվել լուրջ քրեական պատիժների սպառնալիքի տակ (դրանց կապակցությամբ տես 76-րդ կետը): Հարկ է նշել, որ նման տպավորություն ստեղծող միտումը որոշ չափով մեղմվում է, սակայն ցանկալի կլինի, որպեսզի նշվեր, որ կազմակերպիչը կարող է առաջարկել վայրը, որն էլ ենթակա է համաձայնեցման/իրազեկման: Այնուհանդերձ, բացարձակ տեղին չէ դրույթն այն մասին, որ կազմակերպիչը պետք է որոշի միջոցառման ընթացակարգը:

26. Երկորդ, չնայած որ տեղին է դրույթն այն մասին, որ կազմակերպիչը պետք է կարողանա միջոցառումն ավարտել, այս մասին առաջին պարբերության մեջ տեղ գտած դրույթը պետք է ընթերցել սպոնսան բողոքի վերաբերյալ դիտողությունների լույսի ներքո (տես 23-րդ կետը): Երրորդ, նման վերապահումն ընդունելի է այն իրավասության կապակցությամբ, որ պետք է հնարավոր լինի իրավապահ մարմինների աշխատակիցներից պահանջել հեռացնել այն մասնակիցներին, ովքեր «խախտում են միջոցառման ընթացակարգը, հասարակական կարգուկանոնը կամ օրենսդրության նորմերը»: Տվյալ դեպքում պրոբլեմն այն չէ, որ նրանց հեռացումը կարող է որոշ դեպքերում համատեղելի չլինել հավաքներ կազմելու ազատության միջազգային նրաշխիքներին, այլ այն, որ այս իրավասությունը որոշ դեպքերում կարող է օգտագործվել միջոցառման շրջանակներում բողոքի իրավաչափ ակցիան ճնշելու նպատակով: Պրոբլեմը բուն իրավունքի գոյություն չէ, այլ օրենքի նախագծի մեջ հակացուցարարների իրավաչափ կարգավիճակը ճանաչող համարժեք նորմերի բացակայությունը: Այս հարցը քննվում է ստորև (տես 41-րդ և 43-րդ կետեր):

27. Չորրորդ, լիովին ընդունելի է այն դրույթը, որը կազմակերպիչներին թույլ է տալիս օգտվել «կամավորների» օգնությունից, ովքեր կարող են հրահանգիչների դեր կատարել միջոցառման շրջանակներում, սակայն անհրաժեշտ է, որպեսզի այդ անձինք որոշակի ուսուցում անցած լինեն իրենց իրավասությունների շրջանակների և դրանց կիրառման եղանակների մասին, և որոշակի չափով տեղեկացվեն այդ ամենի մասին նախքան միջոցառումը:

28. Հինգերորդ, չնայած որ օգտակար է, երբ հստակեցվում է, որ կազմակերպիչն իրավասու է հրապարակել միջոցառման մասին և հրավիրել մասնակիցների, անհրաժեշտ է պարզաբանել, թե արդյոք այդ իրավունքի նախատեսումից, որը պետք է կազմակերպիչի հատկանշական իրավունք համարվել, ինչպես նաև արտահայտվելու և հավաքներ կազմելու ազատության ապահովումից, բխում է այն եզրակացությունը, որ ուրիշներն այդ իրավունքը չունեն, և որ նրանք այդ կերպ վարվելու դեպքում կհամարվեն սահմանված կարգի խախտմամբ միջոցառում կազմակերպողներ (տես 76-րդ կետը): Ակնհայտ է, որ նման եզրակացությունը կհակասեր վերոհիշյալ նրկու ազատություններին և, քանզի նշված դրույթից հենց այդ հակասությունն է բխում, անհրաժեշտ է այն շտկել:

29. Չնայած որ առարկություն չի ներկայացվում այն դրույթին, որ կազմակերպիչը պատասխանատվության է ենթարկվում իր հսկողության շրջանակներում օրենքի նախագծի և համապատասխան այլ օրենսդրության

պահանջներին չենթարկվելու դեպքում, հնարավոր է, որ պարտավորության մասին 2(ա), (դ), (ե) և (ը) ենթակետերում նախատեսված դրույթներից բխում է նաև պատասխանատվությունն ուրիշների գործողությունների համար («այլ պայմանների կատարման ապահովում», «հասարակական միջոցառման մասնակիցների կողմից օրենսդրության նորմերի պահպանման, հասարակական կարգուկանոնի և հասարակական էթիկայի պահպանման ապահովում» և «հասարակական միջոցառման մասնակիցների կողմից օրենսդրության նորմերի պահպանման, հասարակական կարգուկանոնի և հասարակական էթիկայի պահպանման ապահովում»), «գույքի, ծառերի, թփերի և կանաչ գոտիների անվնասության ապահովում հասարակական միջոցառման վայրում» և «պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպությունների, ինչպես նաև բնակելի շենքերի, շինությունների և աշխատանքային այլ տարածքների կամ բնակարանների կամ հասարակական միջոցառման տարածքում կամ դրա հարևանությամբ գտնվող այլ տարածքների անսահմանափակ մուտքուելքի ապահովում»), չնայած որ նման դեպքերում նա կարող է ի վիճակի չլինել՝ հսկելու ուրիշների գործողությունները: Նշված պարտավորությունները, որոնց հիմքում ընկած նպատակներն ամբողջությամբ արդարացի են, կարող են հակադրվել 2(զ) կետի նպատակներին, որոնց համաձայն կազմակերպիչը կարող է իր կամքից կախված քայլ գործադրել՝ դադարեցնել, երբ ինքն անկարող է լինում կասեցնել օրենքի նախագծի դրույթների խախտումները: Եթե պատասխանատվությունը կարգավորող ընդհանուր օրենսդրությունը չի թույլատրում պաշտպանության այն փաստարկը, թե անհնազանդության խնդիրը ողջամտորեն հնարավոր չէր հաղթահարել միջոցառման կազմակերպման շրջանակներում, ապա դա, անկասկած, կհամարվի անողջամիտ միջամտություն հավաքներ կազմելու ազատությանը:

30. Բացի այդ, միջոցառման վայրում ներկա գտնվելու պահանջը, ըստ նրկայթին, ստացել է բացարձակ ձևակերպում, իսկ դա անընդունելի կլիներ, եթե չհակակշռվեր ողջամիտ արդարացման՝ ընդհանուր օրենսդրությամբ նախատեսվող պաշտպանական փաստարկի մեջբերմամբ (օրինակ, անձի հիվանդությունը կամ իր դեմ ուղղված բռնությունից պատսպարվելու անհրաժեշտությունը): Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ է նշանակում «հանրային բարքեր» հասկացությունը 2(դ) կետում տեղ գտած՝ այդ բարքերի պահպանման և ապահովման պարտավորության իմաստով: Եթե դա վերաբերում է քրեական օրենսդրության սահմանված նորմերին, ապա պետք է որ խնդիրներ չծագեն հավաքներ կազմելու ազատության միջազգային նրաշխիքի կատարման կամ ժամկետային հետադարձ ուժով պատիժների կիրառման միջազգային արգելքի կապակցությամբ: Այնուհանդերձ, եթե այս հասկացության շրջանակները որոշակի չեն, ապա պարտավորությունը կհամարվի անընդունելիորեն աղոտ, որը կհակասի վերը թվարկված իրավունքներին: Բացի այդ, անհրաժեշտ է նաև կամ պարզաբանել, թե արդյոք ողջամիտ արդարացումը 2(զ) կետով նախատեսված պարտավորության («չխոչընդոտել իրավասու պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց օրինական գործողությունները») չկատարումը հիմնավորող պաշտպանական փաստարկ է, և, եթե այդպես չէ, ապա ներառել պաշտպանության այդ հիմքը, քանի որ այլապես դա անհամաչափ բեռ կդնեն, որը համատեղելի չէր լինի հավաքներ կազմելու ազատությանը:

Նորվաժ 7

31. Ինչպես և կազմակերպիչների պարագայում, օգտակար է, երբ հավաքներ կազմելու ազատության իրականացման մասին օրենքը փորձի սահմանել դրանց

մասնակիցների իրավունքները և պարտավորությունները: Մասնակցության իրավունքի, մասնակցությունը դադարեցնելու իրավունքի և հրապարակային միջոցառումների մասնակցության չհարկադրվելու իրավունքի վերաբերյալ 1-ին և 2-րդ պարբերություններում տեղ գտած հստակ ձևակերպումներն արտացոլում են հավաքներ կազմելու միջազգային նրաշխիքների պահանջները և, բնականաբար, ողջունելի են: Նույնը վերաբերում է 3-րդ պարբերության մեջ արտացոլված «պլակատներ, ցուցատախտակներ և այլ դիդակտիկ նյութեր ունենալու կամ կրելու, ինչպես նաև խոսափողներ օգտագործելու» իրավունքին: Այնուհանդերձ, այս ցուցակում թվարկված վերջին իրավունքը որևէ արժեք կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ դա կարող են օգտագործել ուժեղացուցիչ համակարգով և բարձրախոսներով, և անհրաժեշտ է հստակեցնել, որ «խոսափող» բառը ներառում է և թույլատրում նաև դրանց օգտագործումը: Բացի այդ, ցանկալի կլիներ պարզաբանել, թե արդյոք մասնակիցների իրավունքներից կարող են օգտվել նաև կազմակերպիչները, քանի որ հակառակ պարագայում նրանք իրավասու չեն լինի օգտագործել ուժեղացուցիչ համակարգը, իսկ դա, ակնհայտաբար, կենսական կարևորություն կունենա, քանզի մեծ հավաքներում անհրաժեշտ է ապահովել բարձրախոսների լսելիությունը, որը նաև կարևոր է մասնակիցներին հսկելու և ուղղություն ցույց տալու պարտավորությունները կատարելու տնսակնտից:

32. Բացի այդ, չնայած որ հասկանալի է, որ պարբերության երկրորդ մասն արտացոլում է ցուցարարների և մերձակայքում ապրողների ու աշխատողների մրցող շահերը հավասարակշռելու հասկանալի ցանկությունը, արգելքի մեջ օգտագործված հասկացությունները, բացառությամբ գիշերվա կոնկրետ ժամերի վերաբերյալ դրույթի, բավական աղոտ են և կարող են օգտագործվել բողոքի ցույցերի մեծ մասն արգելափակելու նպատակով: Անշուշտ, ցանկալի կլիներ ավելի հստակ պատկերացում կազմել այն մասին, թե ինչն է հանդիսանում բնակելի տարածք, քանի որ հնարավոր է, որ հարակից տարածքում կամ հանրային շենքերի և ձեռնարկությունների շինությունների միջև, դրանց «միախառնված» լինեն բնակելի տներ: Ավելի, «բուժհիմնարկների և երեխաների հաստատությունների շրջակայքի» հասկացությունը չափազանց աղոտ է թե դրա ծածկույթի իմաստով (ներառում է արդյոք դեղատները և բժիշկների գրասենյակները), թե դրա և միջոցառման անցկացման վայրի միջև տարածության/հեռավորության իմաստով: Նշված հիմնարկների/կառույցների «շրջակայքից» արգելքի բացարձակ բնույթն անընդունելի է նաև այն իմաստով, որ շատ հնարավոր է, որ կոնկրետ բողոքի ցույցի կիզակետը պետք է լինի որևէ հիվանդանոց կամ կրթական հիմնարկ, և նշված դրույթը կարող է կանխել մասնակիցների կողմից կարևոր համարվող ուղերձի հաղորդումը: Անշուշտ, լիովին հասկանալի է, որ մտահոգություն է պատճառում այն անհանգստությունը և, թերևս, անգամ վախը, որ հիվանդները և երեխաները կարող են կրել իրենց չափազանց մոտ անցկացվող ցույցի հետևանքով, սակայն ավելի ճիշտ կլիներ այս խնդիրը լուծելու համար նախատեսել, որ ցույցը պետք է անցկացվի հիմնական մուտքից որոշակի հեռավորության վրա (տես 9(3)(գ) կետ, տես նաև սույնի 41-րդ և 42-րդ կետերը), և միայն որոշակի ժամերի:

33. Հրապարակային միջոցառումները «լուսանկարելու, տեսագրելու կամ ձայնագրելու» իրավունքի ճանաչումը, անշուշտ, արտացոլում է տեղեկատվություն հավաքելու իրավունքը, որը պաշտպանված է արտահայտվելու ազատության շրջանակներում և, առանց այդ իրավունքից շեղվելու նպատակի, պետք է միայն վերհիշել, որ տեսագրվող և ձայնագրվող նյութերի օգտագործման կապակցությամբ պետք է հաշվի առնել մասնավոր կյանքի հարգման իրավունքի շրջանակներում պաշտպանվող շահերը:

34. Մասնակիցների պարտավորությունները, ի տարբերություն կազմակերպիչների վրա դրվող հարակից պարտավորությունների (տես 29-րդ կետը) վերաբերում են իրենց հսկողության/կամքի ներքո գտնվող հարցերի և դրա շնորհիվ խնդիրներ չեն առաջացնում: Այնուհանդերձ, «հանրային բարքեր» հասկացության վերաբերյալ արդեն արտահայտված (տես 30-րդ կետը) մտահոգությունը հավասարապես վերաբերում է 7(բ) պարբերության մեջ արտացոլված պարտավորությանը: Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք գոյություն ունի «հարգելի պատճառով» պաշտպանություն պարտավորությունների չկատարման դեպքում, քանզի չկատարումը կարող է ոչ դիտավորյալ լինել՝ պայմանավորված ֆիզիկական անհնարինությամբ, հաշվի առնելով կամ ներկա գտնվողների թվաքանակը, կամ որոշ մասնակիցների որդեգրած ոչ համագործակցային դիրքորոշումը: Նման պաշտպանության բացակայության պարագայում, չկատարման համար պատիժների նշանակումը կլինի անհամաչափ միջամտություն հավաքներ կազմելու ազատությանը, և այս կապակցությամբ անհրաժեշտ է փոփոխություն կատարել օրենքի նախագծի մեջ:

Նորվաժ 8

35. Չնայած որ ակնհայտ է, որ անհրաժեշտ է սահմանել պետական մարմինների կանոնակարգիչ դերն օրենքի նախագծով կարգավորող գործունեության նկատմամբ, թերևս մի փոքր տարօրինակ է այս պարբերությունն անվանել «Իրավունքներ և պարտավորություններ», քանի որ իրականում բովանդակության մեջ որևէ իրավունք նշված չէ, և քանի որ հավաքներ կազմելու միջազգային նրաշխիքը նախատեսում է ոչ թե իրավունքներ, այլ շահեր, որոնք պետական մարմինները պատասխանատու են պաշտպանել: Սա կարող է պարզապես եզրույթաբանական խնդիր թվալ, սակայն ձևակերպման սխալը կարող է ազդել պրակտիկայում իրավունքի նորմերի ի կատար ածման վրա: Այս պարբերության տեղը նույնպես մի փոքր տարօրինակ է, քանի որ դրա մի զգալի մասը նվիրված է զանգվածային հրապարակային միջոցառումների կարգավորմանը՝ 10-12-րդ հոդվածներով նախատեսված իրազեկման կարգից հետո, կամ դրանք չկատարելուց հետո: Օրենքի նախագծի ներքին հակասությունների վերացումն ընդհանուր առմամբ հնարավոր կլինի, եթե 8-րդ հոդվածի դրույթները տեղափոխվեն և շարադրվեն վերոհիշյալ հոդվածներից հետո:

36. Լիազոր մարմնի՝ առաջին պարբերության մեջ արտացոլված պարտավորությունները, ընդհանուր առմամբ, արտառոց չեն, սակայն անընդունելի է 1(ե) պարբերության դրույթն այն մասին, որ քաղաքական գործչի ներկայացուցիչը պետք է որևէ դեր կատարի հասարակական միջոցառման դադարեցման մեջ: Ավելի ճիշտ կլինի, եթե այս գործառույթը վերապահվեր իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց, և այս հարցը լրացուցիչ քննարկվում է ստորև (տես 73-րդ կետը): Հարկ է նաև նշել, որ առնվազն անգլերեն թարգմանության մեջ խոսք է գնում «հրապարակային միջոցառումների» կապակցությամբ ներկայացուցչի այս պարտավորության մասին, մինչդեռ նույն պարբերության այլ դրույթներում խոսք է գնում ավելի նեղ հասկացության՝ միայն «զանգվածային հրապարակային միջոցառումների» մասին: Եթե 1(ե) պարբերությունից «զանգվածային» բառի դուրս մնալը թարգմանության բացթողում չէ, ապա ցանկալի կլինի այդ բառն ավելացնել՝ անկախ զանգվածային հրապարակային միջոցառումների դադարեցման հարցում քաղաքական ներկայացուցիչների դերի կապակցությամբ որդեգրվելիք մոտեցումից, քանզի օրենքի նախագծում չկա որևէ այլ դրույթ, որը նրանց ներքաշում է ոչ զանգվածային հրապարակային միջոցառումների կանոնակարգման գործընթացին:

37. Իրավապահ մարմինների՝ երկրորդ պարբերության թվարկված պարտավորությունների կապակցությամբ որևէ խնդրահարույց կետ չկա. հավաքներ կազմելու ազատության միջազգային նրաշխիքի և մարդու այլ իրավունքների պահանջների կատարման իմաստով իրական խնդիրները կապված կլինեն կոնկրետ դեպքերում այդ պարտավորությունների ի կատար ածման հետ, և արդեն իսկ նշվել է համապատասխան ուսուցում անցկացնելու անհրաժեշտությունը (տես վերը՝ 5-րդ կետը): Այնուհանդերձ, չնայած որ խիստ օգտակար կլինեն, եթե կազմակերպիչները տեղեկացնեն նշանակված ներկայացուցչի մասին (2(ա) պարբերություն), և եթե ապահովվեր այդ անձի ներկայությունը (2(բ) պարբերություն), իմաստ կունենար նախատեսել ներկայացուցչի փոխարինման մասին դրույթ, քանզի միշտ հնարավոր է այնպիսի իրավիճակ, որում սկզբնապես նշանակված անձը չի կարողանա կատարել իր այդ գործառույթը: Բացի այդ, չնայած որ խիստ ցանկալի է, որպեսզի բացառվեն իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից սադրանքի դրսևորումները, անհրաժեշտ է հստակեցնել 2(ե) պարբերության նշանակությունը «զենքի, զինամթերքի և հարկադրանքի հատուկ միջոցների» ցուցադրման կապակցությամբ: Արդյո՞ք այս դրույթի միակ նպատակն է կանխել դրանց ցուցադրման միջոցով սպառնալիք գործադրելու հնարավորությունն այնպիսի իրավիճակներում, որոնցում հասարակական կարգուկանոնին որևէ անմիջական վտանգ չի սպառնում, թե՞ նպատակն ավելի հեռահար է և սահմանափակում է կանխում նշված զենքի օգտագործումը հավաքը ցրելու նպատակով: Երկրորդ տարբերակը հավանական չի թվում (ուժի գործադրման կապակցությամբ տես 74-րդ կետը), սակայն անհրաժեշտ է հստակեցնել, թե «ցուցադրել» հասկացությունն ինչ է նշանակում. ներառու՞մ է այն ջրասփյուռի տեղադրումը միջոցառման անցկացման փողոցին առնչվող փողոցում, որպեսզի արդարացիորեն հնարավոր լինի վերահսկել հնազանդությունը:

Նորվաժ 9

38. Ավելի ճիշտ կլինեն, որպեսզի հրապարակային միջոցառումներ կազմակերպելու և դրանց մասնակցելու իրավունքից բացառությունները զետեղվեն այդ իրավունքներին նվիրված հոդվածներում (այսինքն, 5-րդ և 6-րդ հոդվածներում. տես 21-30-րդ կետեր), այլ ոչ՝ սկզբունքորեն այդ միջոցառումների անցկացման էության վերաբերյալ հոդվածի առաջին երկու պարբերություններում: Մինչդատական կալանքի տակ գտնվող քաղաքացիների՝ հրապարակային միջոցառումներ կազմակերպելու իրավունակության սահմանափակումն անընդունելի չէ, քանզի դա վերաբերում է օրենքի նախագծի համաձայն կազմակերպչին վերապահվող ֆորմալ դերակատարմանը, իսկ կալանքի տակ գտնվողները, բնականաբար, ի վիճակի չեն լինի կատարել այս առումով արդարացիորեն իրենցից պահանջվող պարտավորությունները: Այնուհանդերձ, դա չի նշանակում, որ մինչդատական կալանքի տակ գտնվող անձը չպետք է կարողանա որևէ կերպ մասնակցել ցույցի անցկացմանը, քանի որ բանտում գտնվող անձի նկատմամբ կարելի է սահմանել միայն այնպիսի արգելքներ, որոնք համատեղելի են բանտարկման պահանջներին:⁴² Հետևաբար, հարկ է հստակեցնել, որ այս դրույթն ուղղված է միայն կազմակերպչական ֆորմալ գործառույթին:

39. «Սահմանափակ իրավունակությամբ» անձանց նկատմամբ կիրառվող բացարձակ սահմանափակումը՝ թե՛ նրելսանների, թե՛ հոզեկան խանգարում ունեցող անձանց դեպքում, որով արգելվում է նրանց կողմից «հրապարակային միջոցառումների» կազմակերպումը, ամենայն հավանականությամբ անհամատեղելի

⁴² *Գոլդերն քնդդեմ Միացյալ Թագավորության*, Դատարանի 1975թ. փետրվարի 21-ի դատավճիռը:

կհամարվի հավաքներ կազմելու ազատության միջազգային երաշխիքին, որը հատկապես կրկնվում է Երեխաների դեպքում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում:⁴³ Շատ հնարավոր է, որ տեղին կլինի կանխել սահմանափակ գործունակությամբ անձանց կողմից այնպիսի խոշոր պարտավորությունների ստանձնումը՝ պայմանավորված «զանգվածային հրապարակային միջոցառումների» մասնակցողների թվաքանակով, սակայն ներկայում նախատեսված սահմանափակումը կանդրադառնա անգամ մի քանի անձանց հավաքների վրա, որն անհամաչափ պատասխան կլինի հասարակական կարգուկանոնի վերաբերյալ մտահոգություններին: Սա հատկապես ճիշտ է այն պատճառով, որ սահմանափակ գործունակությամբ անձինք կարող են բողոքի ցույց կազմակերպելու ցանկություն ունեցող միակ անձինք լինել, և հնարավոր է, որ ուրիշ ոչ ոք հետաքրքրված չլինի նրանց անունից կազմակերպչական պարտավորություններ ստանձնելու հետանկարով, որն անհնար կդարձնի բողոքի անցկացումը: Ողջամիտ կլինեն սահմանափակումներ նախատեսել սահմանափակ գործունակությամբ անձանց կողմից կազմակերպման համար թույլատրված միջոցառումների մասշտաբների նկատմամբ և, անչափահաս երեխաների պարագայում, պահանջել ծնողների պարտականություններ կատարողների համաձայնությունը, սակայն ընդունելի չի լինի նման միջոցառումներ կազմակերպելու բացարձակ արգելքը:

40. Ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության և զինվորական ծառայողների ու աշխատակիցների կողմից հրապարակային միջոցառումների կազմակերպման կամ մասնակցության արգելքը միջազգային չափանիշներով չի պահանջվում, սակայն կարող է համարվել թույլատրելի սահմանափակում, որը նրանց նկատմամբ կարող է կիրառվել հասարակական կարգուկանոնի պահպանման գործում նրանց կոնկրետ պարտականությունների և կառավարության այդ ճյուղերի քաղաքական չեզոքության նկատմամբ հանրության վստահության պահպանման անհրաժեշտության տեսակետից:⁴⁴ Այնուհանդերձ, նման մոտեցման որդեգրումը հավանական է միայն այն դեպքում, երբ շահագրգիռ անձանց համար շարունակում են գոյություն ունենալ իրենց մտահոգող հարցերի վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու հնարավորություններ և, հետևաբար, անհրաժեշտ կլինի հստակեցնել, թե այս իմաստով իրականում ինչ հնարավորություններ գոյություն ունեն և, մասնավորապես, ինչ բացառություններ գոյություն ունեն այն «օրենքով նախատեսված դեպքերում», որոնց մասին խոսվում է 2-րդ պարբերության մեջ ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների պարագայում:

41. Չնայած որ անխուսափելիորեն կլինեն վայրեր կամ ժամանակներ, երբ հասարակական միջոցառման անցկացումն անընդունելի կլինի, 3-րդ պարբերությամբ նախատեսված սահմանափակումները չափազանց լայն են և, որոշ առումներով, անհարկիորեն աղոտ: Բացի այդ, դրանք բացառում են հակացույցեր անցկացնելու բոլոր հնարավորությունները՝ անկախ հասարակական կարգուկանոնի համատեքստից: Անկասկած, անվտանգության խնդիրները հաշվի առնելն իրավաչափ է՝ թե՛ հրապարակային միջոցառումների մասնակիցների, թե՛ հանրության լայն խավերի անդամների անվտանգության իմաստով, երբ որոշվում է, թե՛ արդյոք գոյություն ունեն այնպիսի վայրեր, որոնցում այդ միջոցառումների անցկացումը չպետք է թույլատրել: Հետևաբար, անհավանական է, որ 3(ա) պարբերության մեջ թվարկված վայրերի կամ, սկզբունքորեն, 3(բ) պարբերության մեջ թվարկված առաջին երեք վայրերի նկատմամբ

⁴³ 15-րդ հոդված:

⁴⁴ *Ռեկվեզիտ ընդդեմ Հունգարիայի*, Դատարանի 1999թ. մայիսի 20-ի դատավճիռը:

կարող են ողջամտորեն արտահայտվել որևէ առարկություններ: Այնուհանդերձ, «վթարային շենքերի տարածքներ» հասկացությունը չափազանց աղոտ է, և պարզ չէ, թե՛ արգելքը որ կետից է սկսում գործել: Թերևս, այս հասկացությունն անհարկիորեն լայն է: Այս արգելքը կարող է հատկապես լուրջ դեր խաղալ ազգային ժառանգության համար կարևոր վայրերի պաշտպանության հետ կապված բողոքների համատեքստում, սակայն հավասարապես հնարավոր է, որ առաջարկվող միջոցառման վայրի մերձակայքում գտնվող հին շենքի առկայությունը կարող է որպես հիմք շահարկվել միջոցառումն այլ վայր տեղափոխելու համար, որտեղ պակաս հավանական է, որ այն ուշադրություն կստանա, չնայած որ վերոհիշյալ շենքի տարիքը դեռ չի նշանակում, որ այն փլուզվելու վտանգի ենթակա է: Հետևաբար, անհրաժեշտ է առավել ճշգրտորեն սահմանել «վթարային» հասկացությունը (փլուզվելու իրական հավանականության առկայությունը, հավանաբար, ճիշտ չափանիշ կլինեն) և «տարածքներ» հասկացությունը, ընդ որում, «տարածքների» դեպքում ավելի ընդունելի կլինեն կոնկրետ հեռավորության ամրագրումը՝ որպես անվտանգության չափանիշ, ինչպես արվել է, ըստ նրևույթին, 9(3)(գ) պարբերության մեջ թվարկված վայրերի դեպքում:

42. Նմանապես, անհրաժեշտ է հստակեցնել, թե՛ ինչ հիմքով կարող են վայրերը 3(դ) պարբերությամբ նախատեսված կարգով առանձնացվել որպես «առանձնահատուկ պետական նշանակության օբյեկտներ», և թե՛ բացառության տարածքն ինչու է ներառում 500 մետր հեռավորություն, եթե միայն 100 մետր է անհրաժեշտ զինվորական ստորաբաժանումների, պաշտպանական հիմնարկների և մինչդատական կալանքի վայրերի դեպքում: Անկասկած, առանձնահատուկ պետական նշանակության տարածքների սահմանումը պետք է ուղղորդվի օբյեկտիվորեն ստուգվող և հավաքներ կազմելու միջազգային նրաշխիքից բխող չափորոշիչներով, քանզի հակառակ պարագայում հնարավոր կլինեն կանխել հասարակական միջոցառման անցկացումն այնպիսի անընդունելի պատճառներով, ինչպիսիք են, օրինակ, հնարավոր ամոթից խուսափելը կամ քաղաքական շահաբաժիններ ստանալը: Այնուհանդերձ, անգամ եթե նման չափորոշիչներ գոյություն ունեն, և եթե դրանց սահմանումը կառավարության քմահաճության առարկա չէ, ապա անհրաժեշտ կլինեն համոզիչ պատճառներ, որպեսզի հիմնավորվի հրապարակային միջոցառումների տեղակայումը դրանցից այդքան հեռու:

43. Ոչ զանգվածային կամ այլ հրապարակային միջոցառումներ կազմակերպելու կամ անցկացնելու՝ 3(ե) պարբերությամբ նախատեսված արգելքն այնպիսի վայրերի դեպքում, որոնցում «անցկացվում է կամ անցկացվելու է» թույլատրված զանգվածային հրապարակային միջոցառում կամ այլ զանգվածային միջոցառում, խնդրահարույց է երկու առումներով: Առաջին հերթին ծագում է հարց այն մասին, որ բավարար չափով ստույգ չէ, թե՛ ժամանակի որ պահից սկսած է արգելքը սկսում գործել. միջոցառումն «անցկացվելու է» հասկացությունը կարող է ներառել ժամեր, օրեր, անգամ շաբաթներ և ամիսներ նախքան միջոցառման փաստացի անցկացումը, և դրանք բոլորը կարող են անհամաչափ լինել՝ կախված դեպքի փաստացի հանգամանքներից, քանի որ ոչ բոլոր դեպքերում է, որ հնարավոր կլինի արդեն թույլատրված կամ նախատեսված միջոցառումը որևէ կերպ խոչընդոտել: Անկասկած, կարող են լինել հանգամանքներ, որոնցում «երկրորդ» միջոցառման անցկացումը կարող է նշանակել, որ «առաջին» միջոցառման նախապատրաստումը հնարավոր չէ իրականացնել, կամ հնարավոր չէ այն սկսել, քանի որ դրա «տարածքը» զբաղեցված է, սակայն պետք է հնարավոր լինի այս նրևույթը չափել ավելի կոնկրետ պարամետրերով, քան ներկայում նախատեսում է տվյալ դրույթը. հավանական չէ, թե՛ «երկրորդի» ավարտի և «առաջինի» սկսվելու միջև անհրաժեշտ կլինի երկու կամ երեք ժամը գերազանցող ընդմիջում: Նման սահմանափակում, անշուշտ, հասարակական

անվտանգության և հասարակական կարգուկանոնի պոտենցիալ ռիսկերի պատճառով կարող է կիրառվել միևնույն վայրում երկու զանգվածային միջոցառումների անցկացման նկատմամբ, սակայն կասկածելի է, թե արդյոք անհրաժեշտ կլինի նման երկար ժամկետ այն դեպքերում, երբ երկրորդ միջոցառումը զանգվածային չէ: Այս պրոբլեմը, ըստ երևույթին, կարելի է շտկել 13(1)(2) հոդվածով նախատեսված զանգվածային միջոցառումների դեպքում, քանզի այնտեղ նշվում է, որ «սահմանված օրը, ժամին և վայրում անցկացվող մեկ այլ միջոցառման» մասին պետք է նշված լինի իրազեկման մեջ, սակայն անգամ այս դեպքում, անհրաժեշտ է ներդաշնակեցնել երկու դրույթները և անդրադառնալ ոչ զանգվածային միջոցառումների անցկացմանը: Ավելին, ոչ զանգվածային միջոցառումների դեպքում հնարավոր է երկրորդ առարկությունը. մասնավորապես, այս դրույթն ըստ էության կանխում է հակացույցի անցկացումը կոնկրետ տեսակետի ջատագովման նպատակով անցկացվող միջոցառմանն ի պատասխան: Չնայած որ հնարավոր է, որ անհրաժեշտ կլինի ապահովել, որպեսզի հակացույցը չկանխի հավաքի անցկացումը⁴⁵, հակառակ տեսակետ արտահայտելու կարողությունը թե արտահայտվելու ազատության, թե հավաքներ կազմելու ազատության անբաժանելի տարր է, և այդ կարողության բացարձակ արգելքը հանդիսանում է անհամաչափ միջամտություն նշված ազատություններին: Ավելին ճիշտ արձագանք կլինեն հակացույցների խնդրի լուծումը կոնկրետ իրավիճակներին համապատասխան ոստիկանական իրավասությունների իրականացման, ներառյալ առկա ոստիկանական ռեսուրսների օգտագործման միջոցով: Արգելքի այս մասը, հետևաբար, պետք է հանել նախագծից:

44. Այն արգելքը, որը նախատեսված է 3(գ) պարբերությամբ և վերաբերում է «սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելանք սերմանելու, բռնություն և պատերազմ քարոզելու, ինչպես նաև օրենքով արգելված այլ նպատակներ իրագործելու մտադրությամբ» միջոցառումների կազմակերպմանը կամ անցկացմանը, համահունչ է ձևավորված այն տեսակետին, որ մարդու իրավունքները չեն կարող գործադրվել հակաժողովրդավարական նպատակների հասնելու համար,⁴⁶ և որ հավաքներ կազմելու ազատությունից բացի այլ իրավունքներ կան, ներառյալ մարդու արժանապատվությունը և խտրականության արգելքը, որոնք պահանջում են թվարկված նկատառումներով սահմանափակել արտահայտվելու, հավաքներ և միավորումներ կազմելու իրավունքները:⁴⁷ Այնուհանդերձ, այն դեպքերում, երբ գործադրվում է այս արգելքը, միշտ պետք է գիտակցել, որ սահմանադրության կամ օրենքի փոփոխություն ջատագովելը չպետք է հավասարեցվի սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ օրենք խախտելու մտադրության,⁴⁸ և հասարակության տարբեր խմբերի միջև առկա պրոբլեմները մատնացույց անելը չպետք է հավասարեցվի ատելանք սերմանելուն:⁴⁹ Այս տարբերությունների գիտակցումը, հետևաբար, առանձնահատուկ կարևորություն կունենա օրենքի նախագծի ի կատար ածմանը մասնակցողների համար:

⁴⁵ «Plattform ‘Artze für das Leben’-ն ընդդեմ Ավստրիայի, Դատարանի 1998թ. հունիսի 21-ի դատավճիռը:

⁴⁶ Ռեֆահ Պարտիզին («Ընտրության կուսակցությունը») ընդդեմ Թուրքիայի, Դատարանի 2003թ. փետրվարի 13-ի դատավճիռը:

⁴⁷ Չերսիլդեն ընդդեմ Դանիայի գործով Դատարանի 1994թ. սեպտեմբերի 23-ի դատավճիռը: Տես նաև Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայով նախատեսված՝ ռասայական ատելանքի սերմանումը և ռասայական խտրականությունն արգելելու պարտավորությունը:

⁴⁸ Սոցիալիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի, Դատարանի 1998թ. մայիսի 25-ի դատավճիռը, և հայցադիմում 7525/76, X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, 11 DR 117 (1978):

⁴⁹ Ինչպես ընդդեմ Թուրքիայի, Դատարանի 1998թ. հունիսի 9-ի դատավճիռը:

Հրապարակային միջոցառումների կանոնակարգումը

Հոդված 10

45. 1-ին պարբերության առաջին միտքը նպատակ է հետապնդում սահմանելու այն վայրերը, որոնցում հրապարակային միջոցառումները կարող են տեղի ունենալ, սակայն, չնայած դրա ակնհայտ լայն լինելուն, որը կախված է արդեն քննարկված՝ արգելված վայրերի փաստացի շրջանակներից (տես 41-43-րդ կետերը), սկզբունքորեն ողջունելի է, սա մեկ այլ դեպք է, երբ վատ շարադրանքը կարող է վտանգել օրենքի նախագծի ընդհանուր հստակությունը. «այլ զանգվածային միջոցառումների» և «հրապարակային միջոցառումների» պարագայում վայրի հարցը, վերջիվերջո, արդեն կարգավորվել է նախագծի 2-րդ հոդվածով (տես սույնի 12-րդ կետը): Նույն պարբերության երկրորդ նախադասությունն անդրադառնում է «ոչ զանգվածային հրապարակային միջոցառումների» վայրին, սակայն շփոթմունք առաջացնում այն կապակցությամբ, թե արդյոք այդ վայրերը նույնն են հրապարակային միջոցառումների համար, թե սահմանված վայրերը հանդիսանում են լրացուցիչ կատեգորիա: Այս շփոթմունքը ծագում է այն կապակցությամբ, որ առաջին նախադասության մեջ խոսք է գնում «ցանկացած վայրի» մասին, «բացառությամբ օրենքով արգելված տարածքների», իսկ երկրորդ նախադասության մեջ խոսվում է «ընդհանուր հասարակական օգտագործման տարածքներում» դրանց անցկացման մասին, իսկ վերջինիս ճշգրտման դժվարություններն արդեն քննարկվել են (տես վերը՝ 18-րդ կետը): Հնարավոր է, որ հասկացություններից առաջինը ներառում է և երկրորդ հասկացությունը, և «ընդհանուր հասարակական օգտագործման տարածքներ չհամարվող տարածքները», որոնց մասին խոսվում է 2(3) հոդվածում, սակայն ակնհայտ է, որ սա անհրաժեշտ է պարզաբանել, և իրավական որոշակիության տեսակետից խիստ ցանկալի կլիներ լուծել բոլոր միջոցառումների թույլատրելի վայրերին առնչվող բոլոր խնդիրները, որոնք պետք է օրենքի նախագծում կարգավորվեն մեկ հոդվածով: Յանկացած պարագայում, հարկ է նշել, որ արտառոց կերպով անընդունելի է անցկացման վայրի հարցի կարգավորումը «Հրապարակային միջոցառումների անցկացման կարգը» վերնագրված հոդվածում:

46. Նախորդ պարբերության մեջ նշված դժվարությունը ծագում է այն դեպքում, երբ փորձ է արվում պարզել, թե որ միջոցառումների նկատմամբ է գործում իրազեկման/թույլտվության պահանջը, և 1-ին և 2-րդ պարբերությունները 2(2) հոդվածի հետ միասին վերցված այս պահանջից ազատում են ոչ զանգվածային հրապարակային միջոցառումները, «այլ զանգվածային միջոցառումները» և «նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով» անցկացվող «զանգվածային հրապարակային միջոցառումները»: Այս բացառությունները մի կողմից ողջունելի են, նույնիսկ չնայած որ կասկածներ կան այն մասին, որ կարող է լինել հրատապ կարիք, որը կհիմնավորի նախապես իրազեկման, եթե ոչ թույլտվություն ստանալու անհրաժեշտությունը փոքրամասշտաբ միջոցառումների դեպքում: Սակայն, մյուս կողմից, դրանցից բխում է վերաբերմունքի տարբերակում զանգվածային միջոցառումների նկատմամբ, որոնք բոլորը, ինչպես արդեն նշվեց (տես 12-րդ կետը), կարող են հասարակական կարգուկանոնի պրոբլեմներ առաջացնել, և կարող է հնարավոր լինել դրանց կանխումը կամ լուծումը նախապես որոշակի իրազեկում տալու միջոցով (առանց թույլտվություն պահանջելու): Օրենքի նախագծի դրույթները որևէ բանական և օբյեկտիվ պատճառաբանմամբ չեն հիմնավորում, թե վերը նշված հրապարակային միջոցառումների երեք տեսակների նկատմամբ ինչու պետք է առավել խստապահանջ վերաբերմունք դրսևորվի, և նույնիսկ եթե իրազեկման պահանջը կարող է սկզբունքորեն օբյեկտիվ լինել, ապա տվյալ դեպքում դժվար է

պատկերացնել, թե իրազեկման պահանջը, մի կողմ թողնելով թույլտվության խնդիրը, ինչպես կարող է հաղթահարել պնդումն այն մասին, թե դա խախտում է հավաքներ կազմելու ազատության միջազգային նրաշխիքը խտրականությունից զերծ մնալու նրաշխիքի հետ միասին ընթերցելու դեպքում:

47. Երկրորդ պարբերության մեջ տեղ գտած միտքն այն մասին, որ «ընդհանուր հասարակական օգտագործման տարածքներում զանգվածային միջոցառումներ կարող են անցկացվել միայն լիազոր մարմիններին իրազեկելուց հետո...», ապակողմնորոշող է, քանի որ տպավորություն է առաջացնում, թե միայն իրազեկում է պահանջվում, քանզի իրականում պահանջվում է նաև թույլտվություն ստանալ (տես 53-58-րդ կետերը): Չնայած որ հարցականի տակ է նախագծում տեղ գտած այս դրույթի հիմնավորվածությունը, դրույթի նման ձևակերպումն անգամ անընդունելի է և, ցանկացած դեպքում, նրբ շարունակում է գործել թույլտվություն ստանալու պահանջը, պետք է ուղղակիորեն հողում կատարել այս գործընթացը կարգավորող 12-րդ հոդվածի դրույթներին:

48. Պահանջն այն մասին, որ իրազեկումը պետք է գրավոր լինի, ընդհանուր առմամբ չի համարվի առարկելի, սակայն դրա բացարձակ բնույթը, վերցված առնվազն երեք օր առաջ նախապես իրազեկում տալու պահանջի հետ միասին, հավանաբար, կնշանակի, որ դա կհամարվի անհամաչափ միջամտություն հավաքներ կազմելու ազատությանը: Սրա պատճառն այն չէ, որ նման ժամկետը ողջամտորեն չի կարող սահմանվել որպես չափանիշ, որը որպես կանոն պահպանվելու է, քանի որ դրա բացարձակ անճկունությունը (որի արտացոլումն է 4-րդ պարբերության մեջ տեղ գտած դրույթն այն մասին, որ այս ժամկետում չներկայացված իրազեկումը համարվում է չներկայացված, և հետևաբար, ենթակա չէ քննարկման) նշանակում է, որ անհնար կլինի բողոքի ակցիա կազմակերպել այնպիսի հարցի կապակցությամբ, որը հանկարծակի է ծագել, և որի առնչությամբ երեք օր անցնելն անխուսափելիորեն անհիմաստ կդարձնի բողոքի ողջ ակցիան: Ավելին, ներկայում նախագծում տեղ գտած ձևակերպումները, հավանական է, կհանգեցնեն պահանջի ոչ դիտավորյալ խախտումների, նրբ, օրինակ, ձեռնարկության տարածքի մի մասում սկսված բողոքի ակցիան վերածվում է ցույցի կամ երթի, նրբ մասնակիցները հատում են հանրային ճանապարհը և անցնում տարածքի մյուս մասը (փողոցի մյուս կողմում). հնարավոր է, որ մասնակիցները մտադիր չեն անգամ հրապարակային միջոցառում կազմակերպել, սակայն ճանապարհը հատելը նման հետևանք ունի, և եթե դրա մասնակիցների թիվը գերազանցում է 100-ը, ապա հավաքը դառնում է զանգվածային հրապարակային միջոցառում, որի դեպքում պահանջվում էր իրազեկում տալ ակցիայից ավելի քան երեք օր առաջ, չնայած որ բողոքը ծագել է ձեռնարկության ղեկավարության հանկարծակի գործողությունների հետևանքով միայն:⁵⁰

49. Չնայած որ որոշ անձինք հրապարակային միջոցառում կազմակերպելու ցանկությունը կունենան դրա անցկացումից մի զգալի ժամանակ առաջ արդեն, իրազեկման ժամկետի 20-օրյա առավելագույն սահմանի կիրառումը դժվար թե խնդրահարույց համարվի. իրազեկման իրավաչափ նպատակն է իշխանություններին հնարավորություն տալ, որպեսզի վերջիններս կարողանան լուծել բողոքի ակցիայի պատճառով առաջացող հնարավոր դժվարությունները, որոնք կարող են կանխատեսելի չլինել, եթե իրազեկումը քննվի տվյալ միջոցառման անցկացումից շատ երկար ժամանակ առաջ: Ավելին, իրազեկում տալու առավելագույն նախնական ժամկետի

⁵⁰ Cf. վեցժամյա ժամանակահատվածն ընդունելի է համարվել *Կիվենմասն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով Հանձնաժողովի 1990թ. թիվ 412 որոշման մեջ, տես 1994թ. մարտի 31-ի «Տեսակետները»:

քսանօրյա սահմանափակումը միևնույն ժամանակ թույլ է տալիս այլընտրանքային լուծումներ գտնել, եթե սկզբնապես ներկայացվող առաջարկը համարվի դժվարություններ ստեղծող տարբերակ: Մասն դեպքերում, իրազեկման ավելի երկար ժամկետ չթույլատրելը դժվար թե հավաքներ կազմելու ազատության իրավունքի իրավաչափ իրականացման սահմանափակում համարվի:

50. Հարկ է նշել, որ որոշ միջոցառումների, մասնավորապես, երթերի և շքերթների դեպքում, անհրաժեշտ կլինի իրազեկել մի քանի համայնքապետների, քանի որ առաջարկվում է անցնել մի շարք տարբեր համայնքներով: Սա իրենով խնդրահարույց չէ, քանի որ յուրաքանչյուր համայնքապետ կարող է տարբեր մտահոգություններ ունենալ, որոնք անհրաժեշտ կլինի լուծել: Այնուհանդերձ, դա անկասկած դժվարություններ կպատճառի թույլատրման փուլում, որոնք քննարկվում են ստորև (տես 58-րդ կետը):

Հոդված 11

51. Այնքանով, որքանով իրազեկման պահանջն ընդունելի է, 1-ին և 2-րդ պարբերություններով պահանջվող տեղեկատվության ընդհանուր բնույթը հասկանալի է: Այնուհանդերձ, ստորագրությունների իսկությունը նոտարի կողմից հաստատելու պահանջը (1(1) պարբերություն), ըստ երևույթին, չափազանց բյուրոկրատական է, և անկասկած լրացուցիչ ֆինանսական ծախսեր կպատճառի զանգվածային հրապարակային միջոցառումների կազմակերպիչներին: Չնայած որ կարևոր կլինի համոզվել, որպեսզի ենթադրյալ կազմակերպիչն իսկապես լինի նա, ով ինքն է իր պնդման համաձայն, այս գործընթացի պահանջը կարող է շատ դեպքերում անհարկի լինել, քանի որ այդ անձինք քաջ հայտնի կլինեն իշխանություններին: Բացի այդ, երբ նրանք հայտնի չեն, հաստատման պահանջը կարող է ոչ անհրաժեշտ դառնալ անձը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, որը կարող է հաստատման նույն դերը կատարել, ինչ կնիքը կազմակերպությունների դեպքում (3-րդ պարբերություն) և, հետևաբար, այդ դրույթը չպետք է պահպանվի օրենքի նախագծում:⁵¹ Հարկ է ընդգծել, որ անհրաժեշտ է առանձնահատուկ խստությամբ վերահսկել իրազեկման նկատմամբ ներկայացվող ֆորմալ պահանջների բավարարման մասին որոշումների կայացման գործընթացը, քանզի դա հնչողուն կարող է կիրառվել որպես լծակ, որով հնարավորություն չի տրվի հասնել միջոցառման հարցի ըստ էության քննության փուլին: Հետևաբար, շատ ճիշտ է, որ 4-րդ պարբերությամբ պահանջվում է, որպեսզի պակասի/թերությունների դեպքում լիազոր մարմինն այդ մասին տեղեկացնի կազմակերպիչներին: Այնուհանդերձ, այս դրույթը, ըստ երևույթին, նախատեսում է միայն բանավոր տեղեկացում «իրազեկման քննության ընթացքում», իսկ արդյունավետ դատական հսկողությունը կարող է հաջողությամբ պակսվել միայն այն դեպքում, երբ տեղեկացումը գրավոր է, ինչպես, օրինակ, արգելելու մասին որոշումը (տես 68-րդ կետը): Բացի այդ, պետք է հստակեցնել, որ կոնկրետ իրազեկման հետ կապված բոլոր թերությունների մասին պետք է նշել միանգամից, որպեսզի չստացվի մի իրավիճակ, որում իրազեկումը քննող մարմինը յուրաքանչյուր անգամ մատնացույց կանի միայն մեկ թերություն, ապա՝ ստանալով նախկին թերության ուղղմամբ տարբերակը, մատնացույց անի հաջորդը, և այդպես շարունակ: Մասն պահանջի դեպքում հնարավոր է իրազեկման գործընթացն անհարկի ձգձգել և խոչընդոտել զանգվածային հասարակական միջոցառման անցկացումը:

⁵¹ Հարկ է նշել, որ չի պահանջվում, որպեսզի կազմակերպության ղեկավարների ստորագրությունները վավերացվեն կազմակերպության կնիքով ուղեկցվելու դեպքում:

52. Հարկ է նշել, որ 11-րդ հոդվածն ուղղակիորեն չի նախատեսում որևէ դրույթ այն մասին, որ իրազեկման մեջ պետք է նշվի կոնկրետ լիազորված անձի նշանակումը որպես կազմակերպիչ՝ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի փոխարեն (տես 52-րդ կետը): Նույն սկզբունքը կիրառվում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարի լիազորված անձի դեպքում:

Հոդված 12

53. Մյուս դրույթներից, օրինակ, իրազեկման քննության վերաբերյալ դրույթներից պարզ է դառնում, որ այս գործընթացի բուն իմաստը ոչ թե տեղեկատվություն տրամադրումն է, այլ հաստատման ստացումը: Ավելին, 1-ին պարբերությամբ նախատեսված ֆորմատը, ըստ երևույթին, նշանակում է, որ պահանջվում է հիմնավորել միջոցառման կազմակերպման նպատակը, և իրականում գործընթացին ներհատուկ չէ այն կանխավարկածը, որի շրջանակներում միջոցառումը կարող է կազմակերպվել, և որի շրջանակներում անհրաժեշտ է միայն պարզել, թե արդյոք գոյություն ունեն որոշակի խոչընդոտներ, որոնք չեն կարող հաղթահարվել: Այս մոտեցումը, որն ակնհայտ է նաև արգելքի վերաբերյալ դրույթներում (տես 59-70-րդ կետեր), հակասում է հավաքներ կազմելու ազատության միջազգային երաշխիքին, և տեղին կլիներ, որպեսզի այս հոդվածում արտացոլված դրույթները փոխտեսքին, որպեսզի սահմանվեր հստակ կանխավարկած («պրեզումպիա») ի նպաստ հրապարակային միջոցառումներ անցկացնելու իրավունքի:

54. Առաջարկվող ընթացակարգն առաջին հայացքից արդարացի է, սակայն լիազոր մարմնից ուղղակիորեն չի պահանջվում կազմակերպչին տեղյակ պահել/զգուշացնել այն մտահոգությունների մասին, որոնք լիազոր մարմինը կարող է ունենալ առաջարկվող միջոցառման անցկացմամբ ստեղծվող հնարավոր ռիսկերի կամ պրոբլեմների մասին: Մա խիստ կարևոր է, որպեսզի կազմակերպիչը հնարավորություն ունենա անդրադառնալ և, թերևս, փարատել առկա մտահոգությունները: 1-ին պարբերության դրույթներով այդ մասին տեղեկացումը բացառված չէ, սակայն կախված է լիազոր մարմնի հայեցողությունից, և ավելի ճիշտ կլիներ, եթե այդ դրույթները հստակորեն սահմանվեին, իսկ կազմակերպչին բավարար ժամանակ տրվեր մտահոգությունների անհիմնավորվածությունը կամ դրանց լուծման եղանակը բացատրելու համար: Չնայած որ քննարկումը հետաձգելու մասին դրույթը որոշ հնարավորություն տալիս է նման մոտեցում որդեգրելու համար, դա դժվար թե օգնի առանց մտահոգությունների մասին հայտնելու պահանջ սահմանելու, և հարկ է այդ մասին ուղղակիորեն նշել օրենքի նախագծում:

55. Իրազեկման քննարկումից հետո որոշումը հրապարակելու մասին դրույթը, ընդհանուր առմամբ, ողջունելի է, սակայն հարկ է նշել, որ հաջորդ դրույթը նախատեսում է փոստի օգտագործումն արգելելու մասին որոշում կայացնելու դեպքում, որը կարող է անհարկի ձգձգում պատճառել (տես 68-րդ կետը): Անհրաժեշտ է ներդաշնակեցնել երկու դրույթները և ապահովել պրակտիկայում որոշման մասին արագ հայտնում:

56. Մի կողմ թողնելով նախկինում նշված մտահոգություններն այն մասին, որ անհրաժեշտ է թույլատրել բողոքի սպռնության ձևերի անցկացում (տես 41-րդ և 43-րդ կետերը), հրապարակային միջոցառում թույլատրելու մասին որոշում կայացնելու կարգը վկայում է այն մասին, որ համապատասխան կերպով գիտակցվում է տվյալ հարցի լուծման մասին հայտնելու անհրաժեշտությունը:

57. Որոշում կայացնելու համար սահմանված ժամկետը շատ ավելի իրատեսական է դառնում 2-րդ պարբերության այն դրույթով, որի համաձայն թույլտվությունը համարվում է տրված, եթե քննարկման համար սահմանված ժամկետին գումարած երեք ժամվա ընթացքում վարույթը չի ավարտվում և միայն սահմանափակ ուշացում է թույլատրվում այն դեպքերում, երբ քննվում են այլ իրազեկումներ: Այնուհանդերձ, հարկ է գիտակցել, որ դա չի հանգեցնում միջոցառման թույլատրված լինելու մասին ֆորմալ հաստատման, և պրակտիկայում կարող են դժվարություններ լինել այս մեխանիզմով ստացված թույլտվության առկայության մասին իրավապահ մարմինների աշխատակիցներին համոզելիս: Հավաքներն ի սկզբանե թույլատրելի համարելու կանխավարկածին ավելի համահունչ կլինեն, եթե հրապարակային միջոցառումները թույլատրված համարվեին իրազեկման ստացման պահից՝ հաշվի առնելով նաև պահանջվող ժամկետի տևողության մասին արտահայտված այլ մտահոգությունները (տես 23-րդ կետը), եթե դրանք քննարկվին անհրաժեշտ չի համարվում, ընդ որում՝ դրանց քննարկումը կարող է անհրաժեշտ համարվել այն դեպքերում, երբ լուրջ անկարգությունների, գույքային լուրջ վնասի պատճառման, համայնքի կյանքը լրջորեն խաթարելու և ուրիշներին լրջորեն սպառնալու վտանգներ կան: Հեշտ կլինեն իրավապահ մարմինների աշխատակիցներին իրազեկել նման միջոցառումների մասին, միջոցառման իրավական կարգավիճակի վերաբերյալ թուրքնկալման ժխտելիք, իսկ կանոնակարգման նկատմամբ վերաբերմունքն ավելի շատ պոզիտիվիստական կլինեն:

58. Ինչպես նշվել է (տես 50-րդ կետը), 10-րդ հոդվածով պահանջվում է իրազեկում տալ բոլոր այն համայնքներին, որոնցում անցկացվելու/անցնելու է երթը/շքերթը, եթե երթն անցնելու է մի քանի համայնքների միջով: Այնուհանդերձ, 12-րդ հոդվածում ուղղակիորեն կարգավորված չէ նման դեպքերում թույլտվության ստացման գործընթացը և, հակառակի մասին դրույթների բացակայության պարագայում, հարկ է այս «լռությունից» ենթադրել, որ յուրաքանչյուր համայնքում պետք է նաև թույլտվություն ստացվի: Սա սկզբունքորեն անընդունելի չէ, սակայն կարող է պրակտիկայում խնդրահարույց լինել, քանի որ ժամկետների խնդիր կարող է կազմակերպիչներին թույլ չտալ մասնակցել անհրաժեշտ բոլոր քննարկումներին: Հետևաբար, ճիշտ կլինեն օրենքի նախագծում ներդնել մի տարբերակ, որի շրջանակներում նման դեպքերում կանցկացվեն համապատասխան բոլոր շահագրգիռ համայնքների հետ համատեղ քննարկումներ, որպեսզի և ոչ մեկի շահերը չխաթարվեն:

Հոդված 13

59. Անշուշտ, կան հավաքներ կազմելու ազատության միջազգային երաշխիքին համահունչ այնպիսի իրավիճակներ, որոնցում ճիշտ կլինեն արգելել միջոցառման անցկացումը կամ բացարձակապես, կամ ժամկետային հետաձգման կամ վայրը փոխելու միջոցով: Բոլոր այս առումներով հետաձգումը կարելի է գտնել 13-րդ հոդվածի դրույթներում, սակայն քննարկված ոչ բոլոր հանգամանքները կարող են միջազգային չափանիշներով հիմնավորված համարվել:

60. Այսպիսով, արդեն պարզ դարձավ, որ հարցականի տակ է դրվում է այն մոտեցումը, որի համաձայն թույլտվությունը պետք է լինի ընդհանուր պահանջ ցանկացած հրապարակային միջոցառում անցկացնելու դեպքում (տես 53-րդ կետը) և, եթե այդպես է, ապա 1(1) պարբերության մեջ տեղ գտած ավտոմատ արգելքը, որի հետևանքով «պարտադիր տեղեկությունները և փաստաթղթերը» չեն ներառվել, կարող է կոնկրետ իրավիճակում համարվել անհաշտ միջոց: Այնուհանդերձ, հաշվի առնելով իրազեկումն ուղղելու հնարավորությունը (14-րդ հոդվածը նախատեսում է, ինչպես նշվեց 51-րդ կետում, թերությունների մասին տեղեկացում, իսկ սույն հոդվածի 4-րդ

պարբերությամբ նախատեսվում է, որ կազմակերպիչները երկու ժամ կարող են պահանջել «համապատասխան տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացնելու» համար), դա հավանաբար կգործեր միայն տեխնիկական ճշգրտության անհարկիորեն կարծր խստապահանջության դեպքում կամ այն դեպքում, երբ իրազեկումը տրվել է միջոցառումից երեքից պակաս օր առաջ, որը, ինչպես առաջարկվեց, պետք է հնարավոր լինի (տես 48-րդ կետը), և կանոնակարգման իրավաչափ գործառույթի կատարման տեսակետից որևէ պրակտիկ նշանակություն չունեցող սխալներն ուղղելու հնարավորություն գոյություն չունի: Անշուշտ, նման դեպքերում հնարավոր է, որ տեխնիկապես արգելված միջոցառման ի կատար անցնելու համար պատժի նշանակումն անհամաչափ համարվի, և անհրաժեշտ կլինի համապատասխան անձանց նկատմամբ վարույթներ հարուցելու հայեցողությունը գործադրել իմաստուն կերպով (տես 76-րդ կետը):

61. Հնարավոր է, որ միևնույն վայրում միևնույն ժամանակ երկու միջոցառումների անցկացումն անհաղթահարելի դժվարություններ առաջացնի ոստիկանական աշխատանքի համար, սակայն այդ հիմքով 1(2) պարբերությամբ նախատեսված ավտոմատ արգելքն անընդունելի է, քանի որ դժվարության հետևանքով արգելքի անխուսափելիությունը քննելու մասին որևէ դրույթ գոյություն չունի: Անշուշտ, խոշոր հանրային հրապարակում իրար չառնչվող երկու թեմաներով երկու առանձին բողոքի ցույցերի անցկացումը, որոնցում ակնկալվում է մոտ հարյուր մասնակից, չի կարող այնպիսի դժվարություններ պատճառել, որոնք պատշաճ պատրաստում անցած ոստիկանական մարմինները չկարողանան լուծել առանց հասարակական կարգուկանոնը կամ անվտանգությունը վտանգելու: Հետևաբար, արգելքի այս հիմքը պետք է դառնա պայմանական՝ կախված այնպիսի ողջամիտ հիմքերի առկայությունից, որոնց հիման վրա կարելի է կարծել, որ լուրջ անկարգությունների ռիսկ կա, և որ հնարավոր չէ դրանք հաղթահարել ոստիկանական գործունեության կամ միջոցառման անցկացման առաջարկված կարգը փոխելու միջոցով (տես նաև 70-րդ կետը):

62. Հաշվի առնելով նախորդ պարբերության մեջ տեղ գտած դիտարկումը, պետք է հստակեցնել, որ 1(3) պարբերությամբ նախատեսված՝ հասարակական կարգուկանոնի հիմքով արգելքը բավարար չափով խիստ չէ. «կարող է» բառի օգտագործումը վկայում է այն մասին, որ տվյալ հիմքը վերաբերում է միայն հնարավոր իրավիճակներին, այլ ոչ՝ իրական ռիսկերին: Հետևաբար, այս հիմքը պետք է վերաձևակերպվի առաջարկված կերպով: Այս ու նախորդ հիմքերը կարող են միաձուլվել, քանզի երկու միջոցառումների համաժամանակյա անցկացումը միայն մի օրինակ է այնպիսի իրավիճակների, որոնցում հնարավոր է ողջամտորեն եզրակացնել, որ լուրջ անկարգության իրական ռիսկ գոյություն ունի:

63. Օրենքով չթույլատրված տարածքի դեպքում կիրառվող բացարձակ արգելքը սկզբունքորեն ընդունելի է: Այնուհանդերձ, ինչպես արդեն պարզ դարձավ (տես 41-43-րդ կետերը), օրենքի նախագծով նախատեսված են դեպքեր, երբ միջոցառումներ անցկացնելու բացառությունները չափազանց լայն են, և 1(4) պարբերությամբ նախատեսված հիմքի ընդունելիությունը կախված կլինի արդեն արտահայտված մտահոգությունների գոհացուցիչ լուծումից:

64. Նախորդ պարբերության մեջ արտահայտված դիտարկումները հավասարապես կիրառելի են 1(5) պարբերության դրույթների նկատմամբ, որով արգելք է կիրառվում այն դեպքերում, երբ կազմակերպիչները «իրավունք չունեն միջոցառում անցկացնելու պահանջ ներկայացնելու» ինչպես պարզ դարձավ (տես 39-րդ կետը), կազմակերպիչ լինելու նկատմամբ սահմանված ոչ բոլոր բացառություններ են

համահունչ միջազգային չափանիշներին, որից հետևում է, որ այս արգելքն ընդունելի կլինի միայն այն դեպքում, երբ լուծված կլինեն արդեն արձարձված մտահոգությունները: Ավելին, ցանկալի կլիներ հստակեցնել, թե՞ արդյոք դրույթը կիրառվում է այն դեպքում, երբ առաջարկվող կազմակերպիչներից միայն մի քանիսն են գուրկ այդ իրավունքից, թե՞ միայն այն դեպքում, երբ նրանք բոլորն են գուրկ այդ իրավունքից: Ընդունելի կլիներ միայն վերջին տարբերակը, քանի որ օրենքի նախագիծը չի պարունակում որևէ դրույթ, եթե՞ անգամ մի պահ մոռանանք հավաքներ կազմելու ազատության ընդհանուր պրակտիկան, որն անհրաժեշտ կդարձնի մեկից ավելի անձանց՝ որպես կազմակերպիչների առկայությունը: Եթե՞ օրենքի նախագիծը նման մտադրություն չի հետապնդում, ապա ակնհայտ է, որ անհրաժեշտ կլինի նախագծում համապատասխան փոփոխություն կատարել:

65. Անկասկած, իրավաչափ է երթևեկության և հետիոտների վրա երթի ազդեցությունը հաշվի առնելը, սակայն 1(6) պարբերության մեջ տեղ գտած դրույթը, որի համաձայն երթն արգելվում է, եթե՞ այն «պարալիճում է կոնկրետ բնակելի տարածքի կամ միջազգային մայրուղիների երթևեկությունը», անընդունելի է, քանի որ այն որևէ փաստացի հիմքեր չի նախատեսում նման գործողություն կատարելու համար. բավարար է կարծիքն այդ մասին, թե՞ պետք է լինեն ողջամիտ հիմքեր նման եզրակացության հանգելու համար: Ավելին, տվյալ դրույթի մեջ որևէ կերպ չի նշվում, թե՞ ինչպիսի լրջության կամ տևողության «պարալիճում» պետք է լինի, որպեսզի երթն արգելվի: Հանրային և սոցիալական կյանքի տարբեր մասերի բախման անխուսափելի հետևանք է այն, որ կոնկրետ գործունեությունը կարող է որոշ անհարմարություն պատճառել որևէ այլ գործունեություն կատարելու ցանկություն ունեցող որոշ այլ անձանց, սակայն առաջին սկզբունքի անհերքելի կարևորության գիտակցումը, հատկապես ժողովրդավարության այնպիսի կարևոր արժեքի կապակցությամբ, ինչպիսին է հասարակական բողոքը, նշանակում է, որ ուրիշներից կարող է ակնկալվել այդ հետևանքին նրանց պատրաստ լինելը և այն կրելը՝ պայմանով, որ նրանց պատճառվող անհարմարությունը չափազանց ծանր չլինի: Հենց այս հիմքով էլ ճանապարհները հաճախ ժամանակավորապես փակվում են, որպեսզի ապահովվի քաղաքական առաջնորդների անվտանգ անցումը, կամ որպեսզի պետական հյուրերը պատշաճ ընդունելության արժանանան: Հետևաբար, կարևորագույն հարցն այն չէ, թե՞ արդյոք լինելու է երթևեկության պարալիճ, այլ այն՝ թե՞ որքան ընդգրկուն և որքան տևական է այն լինելու, և երթի արգելումը պետք է թույլատրվի միայն այն դեպքերում, երբ լուրջ հիմքեր կան՝ կարծելու, որ երթը կամ շքերթն էապես կազդի ուրիշների՝ իրենց գործունեությունն իրականացնելու կարողության վրա: Կես ժամը չգերազանցող ուշացումը դժվար թե՞ համարվեր այնքան անողջամիտ, որ ուրիշներից հնարավոր չլիներ ակնկալել դրա հանդուրժում: Անհրաժեշտ է այս դրույթը համապատասխան փոփոխության ենթարկել:

66. Բավարար չափով հիմնավորված համոզմունքի/կարծիքի վերաբերյալ պահանջի բացակայությունը խնդրահարույց է նաև 1(7) պարբերության մեջ տեղ գտած արգելքի իմաստով, քանզի դա վերաբերում է այն հնարավոր տարբերակին, երբ «առձակատումը կարող է անխուսափելի լինել», եթե՞ երկու միջոցառումներն անցկացվեն միևնույն ժամանակ «հարևանությամբ գտնվող տարածքում կամ անմիջական մերձակայքում»: Ի լրումն առձակատման հնարավորության ոչ ավել քան ենթադրյալ լինելուն, դրույթը չի պահանջում անդրադառնալ այդ առձակատման փաստացի մասշտաբին. հակառակ տեսակետներ ունեցող մեկ-երկու հոգու միջև վեճը, ակնհայտորեն, տարբերվում է մի քանի հարյուր հոգու մասնակցությամբ բռնկվող հուզումից, և անհրաժեշտ է տարբերակում մտցնել նաև երկու խմբերի նկատմամբ հսկողությունը չկորցնելու՝ ոստիկանության և իրավապահ այլ մարմինների

կարողություններից կախված: Ներկայում այս դրույթի գոյությունը մասնակի արտացոլում է այն ընդհանուր երևույթի, որ օրենքի նախագիծը նպաստավոր չէ հակացույցներ անցկացնելու հնարավորության առումով (տես 41-րդ և 43-րդ կետերը): Այս դրույթում հաշվի չի առնվում, որ կարգուկանոն պահպանելուն ուղղված գործունեությունը հանդիսանում է հավաքներ կազմելու ազատությունը երաշխավորելու պազիտիվ պարտավորության մի տարրը: Ավելի լավ կլիներ, եթե այս հարցը լուծվեր վերոհիշյալ ընդհանուր իրավասությունների շրջանակներում (տես 61-րդ կետը), որպեսզի հասարակական կարգուկանոնի պոտենցիալ պրոբլեմները հարթելիս բավարար ուշադրություն դարձվեր գործողությունների ձեռնարկելու համար օբյեկտիվ հիմքերի առկայությանը, և որպեսզի համաչափ արձագանք տրվեր այն պրոբլեմներին, որոնց ընկալումը հիմնավորված է:

67. Չնայած որ շատ ոգևորող է արգելված հիմքերի ցանկի վերջում տեսնել 1-ին պարբերության մեջ տեղ գտած այն միտքը, որ այդ ցանկը սպառիչ չէ, այնուհանդերձ, բացի ցանկը կրճատելուց և վերաձևակերպելուց, կարևոր կլինի ապահովել, որպեսզի դրանում պահպանվող հիմքերը ենթարկվեն նեղ մեկնաբանման, որպեսզի անհարկի խոչընդոտներ չկիրառվեն հավաքներ կազմելու ազատության նկատմամբ:

68. Ամբողջությամբ արդարացված է 2-րդ պարբերության մեջ տեղ գտած այն պահանջի գոյությունը, որ արգելքի որոշումը պետք է պատճառաբանված լինի: Այնուհանդերձ, այս որոշումը կազմակերպիչներին հանձնելու կամ նրանց փոստով ուղարկելու այլընտրանքների նախատեսումը խնդրահարույց է, հատկապես քանի որ այս դրույթը, ըստ ամենայնի, միջոցի ընտրությունը թողնում է լիազոր մարմնի հայեցողությանը: Անշուշտ, որոշումը փոստով ուղարկելը կարող է դրա ուշ ստացման պատճառ լինել և, նույնիսկ եթե դա մեկ կամ երկու օրվա ուշացում է, վերջինս կարող է էական լինել, քանի որ արգելքը դատական կարգով բողոքարկելը դրա հետևանքով կդժվարանա կամ անգամ անհիմաստ կդառնա՝ հաշվի առնելով միջոցառման համար առաջարկվող ժամկետները: Ավելի ճիշտ կլիներ, եթե որոշումը տրվեր կազմակերպիչներին, բացառությամբ նրանց բացակայության դեպքի (չնայած որ ավելի հավանական է, որ նրանք որոշման կայացման համար սահմանված ժամկետում հասանելի կլինեն՝ տես 56-րդ և 57-րդ կետերը), և որոշումը պետք է նրանց փոստով ուղարկվի միայն այն դեպքում, երբ նրանք փաստացի բացակայում են:

69. Արգելքի որոշումների նկատմամբ դատական հսկողության առկայությունը կարևոր երաշխիք է ընդդեմ չարաշահումների, և դրա յուրաժամ կիրառումը խիստ կարևոր է հավաքներ կազմելու ազատության նկատմամբ հսկողության այս եղանակի կիրառման պարագայում: Հետևաբար, շատ տեղին է, որ 3-րդ պարբերությունը նախատեսում է նման հսկողություն և պահանջում, որպեսզի արգելքի որոշման դեմ ներկայացվող բողոքը լսվի մեկ օրվա ընթացքում: Այնուհանդերձ, պրակտիկայում նման հսկողության արդյունքը ենթակա է հստակեցման: Նախևառաջ, պահպանվում են կոնկրետ գործեր լսելու համար սահմանված նմանատիպ ժամկետները, և ի՞նչ ժամանակահատված կանցնի նախքան փաստացի դատավճռի կայացումը և հրապարակումը, քանզի վերջինս օրենքի նախագծի համաձայն այն պահն է, երբ ուժի մեջ է մտնում անվավեր ճանաչելու մասին որոշումը: Եթե պրակտիկայում մեկ օրվաից ավելի երկար ժամանակահատված է անցնում նախքան ողջ գործընթացն ավարտելը, ապա դատական հսկողությունը դժվար թե դառնա իրական երաշխիք: Երկրորդ, նույնիսկ եթե որոշումների ժամկետները խնդրահարույց չեն, ապա գործը լսող և գործով որոշում կայացնող դատարանն իր որոշման հիմքում կոնի՞ հավաքներ կազմելու ազատության

սահմանադրական և միջազգային նրաշխիքները, ներառյալ, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային որոշումները: Եթե այդպես չէ, ապա դատական հսկողության մեջ դժվար թե հաշվի առնվեն բոլոր կարևոր գործոնները, որի հետևանքը կլինի այն, որ անընդունելի արգելքները չեն բեկանվի: Չնայած որ այս երկու խնդիրներն ուղղակիորեն չեն կարող լուծվել օրենքի նախագծում, դրանք կարևոր են այն հարցին պատասխանելու իմաստով, թե արդյոք բավարար ջանքեր գործադրվել են չարաշահումների դեմ պատշաճ նրաշխիքներ նախատեսելու ուղղությամբ: Ուշացումների պրոբլեմը կարող է, օրինակ, շտկվել այնպիսի դրույթով, որի համաձայն արգելելու մասին որոշման դեմ բողոքը համարվում է բավարարված, եթե այն չի քննվում, որոշվում և հրապարակվում բողոքի ներկայացումից հետո մեկ օրվա ընթացքում: Ավելին, դատական հսկողության իրականացման մեջ անհրաժեշտ գործոնները հաշվի առնելու դժվարությունները կկրճատվեն կամ կլուծվեն, եթե օրենքի նախագծի ձևակերպումներն ավելի ստույգ լինեն, և եթե լուծվի նախագծում իրարամերժ դրույթների առկայության խնդիրը:

70. 4-րդ պարբերության համաձայն լիազոր մարմինը պարտավոր է այլընտրանքային վայրեր և ժամանակներ առաջարկել այն դեպքերում, երբ արգելքը պայմանավորված է հասարակական կարգուկանոնի և երթևեկության շարժի վերաբերյալ մտահոգություններով, ինչպես նաև երբ առաջարկվել է միջոցառումն անցկացնել արգելված վայրում: Այդ պարտավորության գոյությունը նշանակում է, որ գիտակցվում է պետությունների պատասխանատվությունը հավաքների ազատությանը նպատելու, այլ ոչ՝ միայն կանոնակարգելու ուղղությամբ, և հետևաբար, այն ողջունելի է: Այնուհանդերձ, չնայած որ այլընտրանքները պատշաճ կերպով սահմանափակվում են ժամկետների վերաբերյալ կանոններով (ներառյալ դրույթն այն մասին, որ երկու հրապարակային միջոցառումներ կարող են տեղի ունենալ երկու ժամվա տարբերությամբ, տես 41-րդ և 61-րդ կետեր, և առաջարկվող միջոցառումն առավելագույնը երկու ժամով հետաձգելը), մոտեցումը, այնուհանդերձ, բավարար կերպով չի սահմանում միջոցառումների կանոնակարգման հարմար մեթոդաբանություն: Սրա պատճառն այն է, որ մեկնարկային կետն արդեն արգելք է, փոխանակ արգելքը որպես վերջին աստիճան կիրառելու: Ինչպես արդեն նշվեց (տես 41-րդ և 43-րդ կետերը), մշտապես արտահայտվում է այն կանխավարկածը, որ հակացույցը պրոբլեմ է, որը կարող է կառավարվել միայն արգելքով, չնայած որ իրականում ավելի ճիշտ կլիներ ի սկզբանե սահմանել պրոբլեմի գոյության մասին դատելու հիմքերի պարզումը, իսկ հետո (եթե պրոբլեմը գոյություն ունի), անցնել այն հարցին, թե արդյոք այն կարող է լուծվել առկա իրավապահ ռեսուրսներով կամ այլընտրանքային մեխանիզմներով, ինչպիսին կարելի է գտնել, օրինակ, 4-րդ պարբերության մեջ, և վերջում միայն կիրառել արգելքը՝ որպես վերջին աստիճանի միջոց: Բոլոր դեպքերում որոշումները պետք է կայացվեն կոնկրետ դեպքի առանձնահատկությունների, այլ ոչ՝ ընդհանուր կանոնների կիրառման հիման վրա: Այս հոդվածի նման վերաձևակերպման դեպքում ավելի հավանական կլիներ միջազգային չափանիշներով նրաշխիքավորված հավաքներ կազմելու ազատությունն ապահովելը: Ներկայում 4-րդ պարբերության մեջ տեղ գտած մոտեցումը միայն վեժերոս քայլ է ճիշտ ուղղությամբ, և հավաքների նկատմամբ բավականաչափ հաստատուն մոտեցման բացակայությունն արտացոլված է վերջում տեղ գտած այն դրույթի մեջ, որի համաձայն լիազոր մարմնի կողմից առաջարկված այլընտրանքներն ընդունելուց հետո կազմակերպիչները պետք է նոր իրազեկվում ներկայացնեն: Բացի իրազեկմանն ողջ գործընթացը նորից վերսկսելու տպավորությունից, ընդ որում՝ հնարավոր է նաև, որ իրազեկումն այս անգամ չընդունվի, գործընթացն անհարկիորեն ֆորմալացված/ձևական է՝ հաշվի առնելով, որ լիազոր մարմնի և կազմակերպիչների միջև քննարկումներում արդեն պետք է որ ձեռք

քերված լինի համաձայնություն: Այս հոդվածի վերաձևակերպումն առաջարկված մոտեցումների հիման վրա անխուսափելիորեն կստեղծեր ավելի նպաստավոր վերաբերմունք հրապարակային միջոցառումների անցկացման նկատմամբ և կկրճատեր անհարկի արգելքներ կիրառելու ռիսկը:

Տողված 14

71. Անխուսափելի է, որ կլինեն դեպքեր, երբ միջոցառման դադարեցումը կլինի պատշաճ արձագանք դրա անցկացման հանգամանքներին և, հետևաբար, այս դրույթը որևէ կերպ արտառոց չէ՝ նախատեսելով նման հնարավոր զարգացում օրենքի նախագծի մեջ: Ավելին, 1-ին պարբերության մեջ շարադրված հիմքերն ընդհանուր են, մասնավորապես, ապօրինիությունը (թե՛ն իրազեկման բացակայության, թե՛ն արգելքի խախտման կամ օրենքի պահանջներին չենթարկվելու, կամ, երթի դեպքում՝ հաստատված երթուղու խախտման իմաստով) և կյանքին, առողջությանը, անվտանգությանը և գույքին սպառնացող վտանգի գոյությունը: Այնուհանդերձ, այս կապակցությամբ հարկ է վերհիշել արգելելու իրավասության շրջանակների վերաբերյալ արդեն արտահայտված մտահոգությունները (տես 59-70-րդ կետերը) և այն տեսակետը, որ հասարակական կարգուկանոնին և հարակից երևույթներին վտանգ սպառնալու չափանիշը գոհացուցիչ չէ, քանի որ հիմնավորված կարծիքի առկայություն և բավարար ծանրության/լրջության սպառնալիքի գոյություն չի պահանջվում: Այս խնդիրների վերաբերյալ դրույթների բացակայության պայմաններում, դադարեցման իրավասությունների կիրառումը, հավանաբար, անհամատեղելի կլինի միջազգային չափանիշներին: Ավելին, հարկ է նշել, որ դադարեցման իրավասությունը հայեցողական է, և հավանական է, որ որոշ դեպքերում դրա կիրառումը կլինի անհամաչափ արձագանք կազմակերպիչների թերացումներին և միջոցառումների մասնակիցների գործողություններին: Հետևաբար, այս կապակցությամբ օգտակար է, երբ օրենքի խախտումների կամ հաստատված երթուղուց շեղումների դեպքում պահանջվում է սկզբում նախազգուշացնել, որպեսզի միջոցառումը սահմանված պարտավորությունների «հուն» վերադարձնելու փորձեր կատարվեն: Այնուհանդերձ, անհավանական է, որ բոլոր թերացումները, նույնիսկ եթե դրանք կրկնվում են որոշ մասնակիցների կողմից նախազգուշացում ստանալուց հետո, կհանգեցնեն միջոցառման դադարեցման. շատ դեպքերում, հավանաբար, բավարար կլինի պարզապես կոնկրետ անհատների նկատմամբ կիրառել ձերբակալում իրականացնելու իրավասությունը: Պրակտիկայում համաչափություն ապահովելու անհրաժեշտության ֆոնի վրա կրկին ընդգծվում է հասարակական բողոքի ակցիաների ուստիկանական հսկողություն իրականացնողների պատշաճ ուսուցման կարևորությունը:

72. Դադարեցման գործընթացը, ըստ ամենայնի, խնդրահարույց չէ. սկզբում տրվում է «պահանջ», որն իրականում կարգադրություն է, քանի որ ինչպես պարզ է դառնում 3-րդ պարբերությունից, այն կազմակերպիչներին պարտավորեցնում է «հայտարարել դադարեցման մասին և միջոցներ ձեռնարկել հրապարակային միջոցառումը դադարեցնելու ուղղությամբ»: Հարկադիր դադարեցումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այս պահանջը չի բավարարվում (կամ երբ կազմակերպիչը ներկա չէ, որպեսզի ստանա այն): Ավելին, դա չի կարող իրականացվել առանց խոսափողով (ենթադրաբար, ուժեղացուցիչ համակարգի օգնությամբ, տես 31-րդ կետը) երկու անգամ նախազգուշացնելու, որպեսզի ներկայացվող պահանջը որևէ կերպ սխալ չընկալվի: Այնուհանդերձ, օրենքի նախագծում չի նշվում, թե՛ն ինչ ժամանակահատված պետք է անցնի նախքան հարկադիր դադարեցում իրականացնելը, իսկ դա ցանկալի կլիներ նախատեսել, քանի որ հակառակ դեպքում դժվար կլինի դատել, թե՛ն արդյոք այդ

գործողությունը ձեռնարկվում է անկախ մասնակիցների՝ միջոցառումն ավարտելու ուղղությամբ գործադրվող անկեղծ ջանքերի գոյությունից:

73. Ըստ երևույթին, ընդունելի է, որպեսզի լիազոր մարմնի՝ միջոցառմանը ներկա գտնվող ներկայացուցիչն իրավասու լինի դադարեցնել այն, քանի որ հավանական է, որ ավելի մեծ վստահություն կլիներ, եթե ըստ էության ուստիկանական հսկողության գործառույթ հանդիսացող գործառույթն իրականացվեր իրավապահ մարմինների աշխատակիցների օբյեկտիվ դիտարկումների, քան քաղաքական մարմնի կողմից լիազորված ներկայացուցչի դիտարկումների հիման վրա: Հետևաբար, ցանկալի կլիներ դադարեցման իրավասության այդ մասին վերաբերող դրույթը հանել:

74. Ոչ այս հոդվածում, ոչ օրենքի նախագծում չի նշվում, թե ինչ քայլեր կարող են ձեռնարկվել հարկադիր դադարեցում իրականացնելու ուղղությամբ. 4-րդ պարբերության մեջ պարզապես խոսվում է «օրենքով սահմանված կարգի» մասին, սակայն հույժ կարևոր է, որպեսզի դա համաչափ լինի կոնկրետ իրավիճակին և, մասնավորապես, չստեղծի կյանքից զրկելու կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի ռիսկ: Հնարավոր է, որ այս խնդիրը տվյալ օրենքի նախագծով կարգավորման ենթակա չէ, սակայն անհրաժեշտ է հստակեցնել կոնկրետ իրավասությունների շրջանակները, որպեսզի սույն օրենքի նախագծով վերապահված իրավասությունները հնարավորություն չստեղծեն միջազգային չափանիշներին հակասող վարքագիծ դրսևորելու համար:

Պատասխանատվությունը

Հոդված 15

75. 1-ին պարբերության այն աներկբա ձևակերպումը, որի համաձայն պետությունը կամ համայնքը պարտավոր են հատուցել հասարակական միջոցառման ապօրինի դադարեցման կամ արգելման հետևանքով պատճառված վնասը, դրան գումարած միջոցառմանն ապօրինաբար խոչընդոտող, միջամտող, կամ միջոցառումը դադարեցնող պաշտոնատար անձանց համար վարչական կամ քրեական պատասխանատվություն նախատեսող դրույթը, անկասկած շատ օգտակար են հավաքներ կազմելու ազատության իրավունքի խախտումների դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոց ապահովելու պահանջի կատարման իմաստով: Կարևոր մյուս տարրն արդյունավետ դատական հսկողությունն է (տես 69-րդ կետը): Այնուհանդերձ, կարևոր կլինի սահմանել, թե ինչ մեխանիզմներ գոյություն ունեն պրակտիկայում հասարակական միջոցառման կարգավորման անպատշաճ դրսևորումների մասին բողոքները քննելու համար, քանզի լայնորեն գիտակցվում է, որ անհապաղ և մանրակրկիտ հետաքննություն չիրականացնելը պաշտպանության արտաքննապես արժեքավոր թվացող միջոցները կդարձնի գրեթե անիմաստ: Ավելին, հարկ է հստակեցնել, թե արդյոք որևէ կերպ սահմանափակվում է այն երևույթների շրջանակը (օրինակ, ներառում է արդյոք միջոցառման մասին հանրությանը հայտնելու ծախսերը, բանախոսների և մասնակիցների տրանսպորտային ծախսերը և այս հիմնարար ազատության նկատմամբ միջամտության պատճառած ոչ նյութական վնասը) կամ այն գումարը, որի չափով կարելի է հատուցում ստանալ Հայաստանի օրենսդրության համաձայն, որպեսզի որևէ կասկած չմնա հավաքներ կազմելու ազատության նկատմամբ ենթադրյալ անօրինական միջամտությունների դեպքում տրվող հատուցումների համարժեքության վերաբերյալ: Հատուցում վճարելու պարտականությունը նախատեսված է միայն կազմակերպիչների նկատմամբ, սակայն չպետք է արհամարհել, որ մասնակիցները նույնպես օժտված են հավաքներ կազմելու

ազատության իրավունքով, և անհրաժեշտ է հստակեցնել, թե՞ արդյոք կա որևէ հիմք, որով նրանք կարող են հատուցում պահանջել իրենց կրած հնարավոր վնասների համար: Դեպքերի մեծ մասում հավանական չէ, որ այդ վնասները մեծ կլինեն, սակայն ճիշտ կլինե՞ր այդ շահերը նույնպես հարգել օրենքի նախագծում, եթե այլ օրենքներում այս հարցը կարգավորող դրույթներ գոյություն չունեն: Յանկացած պարագայում, հարկ է հստակեցնել, որ գոյություն ունի համապատասխան քաղաքացիական և քրեական պատասխանատվություն ցանկացած հասարակական միջոցառման հսկման և դադարեցման կապակցությամբ ապօրինի ուժի գործադրման համար:

76. Սկզբունքորեն որևէ առարկություն հնարավոր չէ ներկայացնել հրապարակային միջոցառումների կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ 2-րդ պարբերությամբ նախատեսված կարգով քրեական և այլ պատասխանատվություն կիրառելու դրույթին: Այնուհանդերձ, պետք է պահանջել, որպեսզի պատասխանատվությունը համատեղելի լինի հավաքների կազմելու ազատության իրավունքին, և տարբեր առումներով արդեն նշվել է, որ օրենքի նախագիծն այս խնդիրը չի լուծել: 2-րդ պարբերության ընդունելիությունը, հետևաբար, կախված կլինի վերը նշված մտահոգիչ խնդիրների համաժեռ լուծումից: Ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ պատասխանատվության որոշ տեսակներ կարող են արդարացված լինել, խախտումների համար առաջարկվող պատժամիջոցները, որոնք կներդրվեն Հայաստանի Հանրապետության 1985թ. դեկտեմբերի 6-ի վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 180.1 հոդվածում փոփոխություն կատարելու միջոցով, ըստ ամենայնի չափազանց խիստ են՝ առնվազն նվազագույն սահմանաչափի իմաստով: Ինչպես նշվել է (տես սույնի 3-րդ կետը), հավաքներ կազմելու ազատության նկատմամբ սահմանափակումների թույլատրելիությունը ցանկացած դեպքում կախված կլինի այդ սահմանափակումների համաչափությունից, որը կներառի նաև այլ առումներով իրավաչափ նպատակ հետապնդող պատիժների խստության խնդիրը: Ծառ դեպքերում օրենքի նախագծի կոնկրետ պահանջների չկատարումը լուրջ հետևանքներ չի առաջացնում և, հետևաբար, ճիշտ չէր լինի, որպեսզի դատարանը ստիպված լիներ նաև այդ դեպքերում նշանակել խիստ պատիժ: Ներկայում, հնարավոր պատիժների շրջանակը որպես մեկնարկային կետ չափազանց խիստ է, և դրանք պետք է զգալիորեն մեղմել, որպեսզի գործը քննող դատավորը կարողանա պատշաճ հայեցողություն կիրառել կոնկրետ գործի բոլոր հանգամանքների հիման վրա: Բացի այդ, չնայած որ օրենքի նախագծի խախտումները կարգավորվում են վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով, հավանական է, որ այդ պատիժները բավականաչափ խիստ կլինեն, որպեսզի արդարացի դատաքննության միջազգային երաշխիքների իմաստով համարվեն «քրեական»: Հետևաբար, հարկ է պարզաբանել, թե՞ արդյոք պատասխանատվության որևէ տեսակ որոշելու ընթացակարգը/վարույթը լիովին համահունչ է այդ երաշխիքների պահանջներին, քանի որ հակառակ դեպքում, դրանք կխախտվեն: Հարկ է ավելացնել, որ վերոհիշյալ պայմանը պետք է ցանկացած դեպքում կատարվի՝ թեև կազմակերպելու երաշխիքների շրջանակներում, քանի որ դա կարող է միակ տարբերակը լինել, որի միջոցով հասարակական միջոցառման կազմակերպիչը կամ մասնակիցը կկարողանան արդյունավետորեն բողոքարկել հավաքներ կազմելու իրենց ազատության սահմանափակումը, որը, ինչպես տեսանք (տես 69-րդ կետը), սահմանափակումներ կիրառելու թույլատրելիության անհրաժեշտ նախապայման է:

77. 3-րդ պարբերության այն դրույթը, որի համաձայն «հասարակական միջոցառման կազմակերպիչները կամ մասնակիցներն օրենքով նախատեսված նյութական պատասխանատվություն են կրում այլ անձանց պատճառված ցանկացած վնասի համար» ենթակա է լրացուցիչ պարզաբանման: Այնքանով, որքանով դա

նախատեսում է ուղղակիորեն պատճառած վնասի հատուցման պատասխանատվությունը, դա դժվար թե խնդիրներ առաջացնի, սակայն անհրաժեշտ է նաև նախատեսել «ողջամիտ արդարացմամբ» պաշտպանվելու հնարավորություն, քանի որ հնարավոր է, որ վնաս պատճառած բուն գործողությունը նդել է ուրիշների գործողությունների անխուսափելի հետևանք. օրինակ, գույքը կարող է վնասվել կամ ոչնչացվել մի մասնակցի՝ դրան դիպչելու և վայր գցելու հետևանքով, սակայն դա տեղի է ունեցել միայն այն պատճառով, որ նրան հրել են այլ մասնակիցներ: Ավելին, բացարձակապես անհամաչափ կլիներ կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկել մասնակիցների պատճառած վնասի համար միայն այն հիմքով, թե նրանք են կազմակերպել անցկացվող միջոցառումը: Հնարավոր է, օրինակ, նախատեսել պատասխանատվություն ամբողջ հսկողության տակ պահելու նպատակով պատշաճ կերպով կամավորներ չներգրավելու համար, սակայն բացարձակապես սխալ կլիներ նրանց պատասխանատվության ենթարկել մասնակիցների այնպիսի գործողությունների համար, որոնք միջոցառման ծրագրի/պլանի մեջ ներառված չեն եղել: Բացի այդ, ցանկացած տեսակի պատասխանատվություն կիրառելու փորձեր կատարելիս պետք է հաշվի առնել ամբողջի վարքագծի վրա ոստիկանական հսկողության տակտիկայի այնպիսի փոփոխությունների ազդեցությունը, որոնք կարող են ի չիք դարձնել նախկինում ձեռնարկված կազմակերպչական քայլերը: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որպեսզի պատասխանատվությունը կարգավորող սկզբունքները համահունչ լինեն արտահայտվելու/խոսքի ազատության երաշխիքին:

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 16

78. Նույն հիմքը կարգավորող առկա օրենսդրության չնդարկումը, անշուշտ, իրենով խնդրահարույց չէ, հատկապես եթե գործող օրենսդրությունն ավելի քիչ է համապատասխանում միջազգային չափանիշներին, քան սույն օրենքի նախագիծը: Այնուհանդերձ, չի նշվում, թե օրենքի նախագիծը երբ է գործողության մեջ մտնելու: Իհարկե, հնարավոր է, որ դա ավելացվելու է նախագծման հետագա փուլերում, կամ կանոնակարգված է օրենսդրական գործընթացի վերաբերյալ առավել ընդհանուր բնույթի նորմերով: Երկու մոտեցումներն էլ ընդունելի են, սակայն, ակնհայտաբար, կարևոր է, որպեսզի որևէ անհստակություն չլինի նոր օրենքի գործողության մեջ մտնելու ժամկետի կապակցությամբ:

Պահանջվող փոփոխությունների ամփոփագիր

79. Առաջարկվում է հետևյալ դրույթները կամ դրանց համապատասխան մասերը ջնջել/հանել.

Հոդված 1(2) – հղումը «խաղաղ, անզեն միջոցառումներին» (կետ 7),

Հոդված 2(1) – հրապարակային միջոցառումների նպատակների թվարկումն ըստ էության (կետ 11),

Հոդվածներ 8(1) և 14(2) – լիազոր մարմնի դերը հրապարակային միջոցառումների դադարեցման կապակցությամբ (կետեր 36 և 73), և

Հոդված 9(3) – միևնույն ժամանակ երկու միջոցառումների արգելքը (կետ 43):

80. Բացի այդ, անհրաժեշտ է փոփոխություններ կատարել հետևյալ դրույթներում.

Հոդված 1(1) – ուղղակիորեն նախատեսել, որ ոչ քաղաքացիներն օգտվում են օրենքի նախագծի բոլոր դրույթներից, և որ վերջիններս միայն մասամբ են առնչվում սահմանադրական երաշխիքի իրականացմանը (կետ 6),

Հոդված 1(2) – հասկացությունների սահմանում պարունակող տարրերը տեղափոխել ներկայիս 4-րդ հոդված և կրճատել նպատակների շարադրանքը (կետ 7),

Հոդված 2(1) – բարելավել ձևակերպման ստույգությունը և «քաղաքացիներ» հասկացության սահմանում տեղափոխել 4-րդ հոդված (կետեր 8, 9),

Հոդվածներ 2(2) և (3) և 10 – իրազեկման/թույլտվության պահանջից բացառությունները միավորել (այնքանով, որքանով այդ պահանջը պահպանվում է) (կետեր 13 և 45),

Հոդվածներ 2(3) և 4 – «ընդհանուր հասարակական օգտագործման տարածքներ» հասկացության իմաստը (կետեր 14 և 18),

Հոդված 4-ը տեղափոխել անմիջապես 1-ին հոդվածից հետո, և դարձնելով այն 2-րդ հոդված, դրանում նախատեսել հասկացությունների սահմանման բոլոր դրույթները և խուսափել այլընտրանքային եզրույթների/տերմինների անհարկի գործածությունից (կետեր 7 և 17),

Հոդված 5 – սահմանել, որ «խոչընդոտել» հասկացությունը չի բացառում խաղաղ հակացույցեր անցկացնելու հնարավորությունը, և ընդլայնել կազմակերպչի փոխարինման հնարավորության շրջանակները (կետեր 21 և 22),

Հոդվածներ 5(8) and 10(2) – սպունտան բողոքի որոշ հնարավորություններ ներդնել (կետեր 23 և 48),

Հոդված 6(1) – փոխարինել «ընտրել» բառն ավելի ստույգ եզրույթով, սահմանել, որ խաղաղ հակացույցի նկատմամբ հեռացնելու իրավասությունը չի տարածվում, սահմանել «կամավորների» ուսուցման պահանջ (կետեր 25, 26 և 27),

Հոդված 6(2) – փոփոխել կազմակերպիչների պատասխանատվության վերաբերյալ դրույթները (կետեր 29 և 30),

Հոդված 8 – վերնագիրը համապատասխանեցնել հոդվածի պարունակությանը և այս հոդվածի դրույթները շարադրել ներկայիս 10-12-րդ հոդվածներից հետո (կետ 35),

Հոդված 8(2) – ներդնել ներկայացուցչի փոխարինման մասին դրույթ (կետ 37),

Հոդված 9(1) և (2) – տեղափոխել 5-րդ և 6-րդ հոդվածներ և մեղմել մինչդատական կալանքի տակ գտնվողների և «սահմանափակ գործունակ» անձանց նկատմամբ արգելքը (կետեր 38 և 39),

Հոդված 9(3) – առավել ստույգ դարձնել սահմանափակումները (կետեր 41 և 42) և սահմանել հակացույցերի համար նպաստավոր դրույթներ (կետ 43),

Հոդված 10(1) և (2) – մեղմել թույլտվության և իրազեկման պահանջները (կետեր 46-48),

Հոդված 11 – ավելացնել դրույթ լիազորված անձանց իրազեկելու մասին (կետ 53),

Հոդված 11(1) – մեղմել իսկության ստուգման վերաբերյալ պահանջները (կետ 51),

Հոդված 11(4) – ավելացնել պահանջ, որի համաձայն իրազեկման թերությունների մասին պետք է տեղեկացնել գրավոր և պետք է բոլոր թերությունների մասին նշել միանգամից (կետ 51),

Հոդված 12 – սահմանել կանխավարկած՝ ի նպաստ հրապարակային միջոցառումների անցկացման՝ պահանջելով կազմակերպիչներին զգուշացնել հնարավոր մտահոգությունների մասին, և սահմանելով որոշակի կարգ մի քանի համայնքների վրա անդրադարձող միջոցառումների համար (կետեր 53, 57 և 58),

Հոդված 12 (1) – ներդաշնակեցնել հայտնելու կարգը Հոդված 13 (2)-ի դրույթներին (կետ 55),

Հոդված 13 – այս հոդվածի սկզբում ներդնել արգելքի այլընտրանքներ քննելու պահանջ և մեղմել ինքնաբերական արգելքները (կետեր 59-66 և 70),

Հոդված 13(2) – որոշումը որպես կանոն կազմակերպիչներին առձեռն հանձնելու մասին դրույթ նախատեսել (կետ 68), և

Հոդված 15(2) – մեղմել պատիժների մեկնարկային կետը (կետ 76):

81. Բացի այդ, որոշ պարզաբանում է անհրաժեշտ հետևյալ դրույթների կապակցությամբ. Հոդված 2(1) – «կազմակերպություններ» հասկացությունը ներառում է չգրանցված կառույցները և, եթե ոչ, ապա ինչպես կարող են չգրանցված կառույցները կազմակերպել հրապարակային միջոցառումներ (կետ 10),

Հոդված 2(2) – բացառություն կազմող գործունեության շրջանակները և բացառության հիմնավորումը (կետ 12),

Հոդված 2(4) – արդյոք սա վերաբերում է 2-րդ և 3-րդ կետներին, թե 3-րդ և 4-րդ կետներին, և ինչպիսին են ոչ զանգվածային միջոցառումների նկատմամբ այս դրույթի կիրառության շրջանակները (կետ 15),

Հոդված 3 – «միջազգային համաձայնագրերի» իմաստը (կետ 16),

Հոդված 4 – «տրանսպորտային միջոցների» իմաստը երթերի կապակցությամբ և «մասնակցի» հասկացության սահմանումը (կետեր 17 և 19),

Հոդված 5(8) – «ներկա» գտնվելու իմաստը (կետ 23),

Հոդված 6(1) – արդյոք կազմակերպիչներից բացի այլ անձինք կարող են հրապարակել միջոցառումների մասին և, եթե ոչ, նախատեսել այդ հնարավորությունը (կետ 28),

Հոդվածներ 6(2) և 7(7) – «հանրության բարքերի» իմաստը (կետեր 30 և 34),

Հոդված 7(3) – «խոսափողների» մասին դրույթի մեջ ներառել հղում «ուժեղացուցիչ համակարգերին» և նշել, թե որ դեպքերում են արգելվում դրանց օգտագործումը, բղավոցները և վանկարկումները (կետեր 31 և 32),

Հոդված 7(7) – հնարավո՞ր է պաշտպանությունը «հարգելի պատճառի» հիմքով և, եթե ոչ, ապա նախատեսել այդպիսի դրույթ (կետ 34),

Հոդված 8(1) – արդյոք այս ենթակետը պետք է վերաբերի «զանգվածային» հրապարակային միջոցառումներին (կետ 36),

Հոդված 8(2) – «զենք, ռազմամթերք, հարկադրանքի հատուկ միջոցներ» և «ցուցադրել» հասկացությունների իմաստը (կետ 37),

Հոդված 9(2) – ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների աշխատակիցների համար բողոքների անցկացման այլընտրանքային միջոցներ (կետ 40),

Հոդված 10(1) – միջոցառումների վայրերի հասկացության սահմանումը (կետ 45),

Հոդված 10(2) – հստակեցնել, թե որ դեպքում պահանջվող իրազեկումն է ներառում նաև թույլտվության ստացում (կետ 47),

Հոդված 13(3) – ինչպիսի ժամկետի ընթացքում է իրականացվելու դատական հսկողություն, և միջազգային դատական նախադեպեր հաշվի առնելու՝ դատարանների կարողությունը (կետ 69),

Հոդված 14(4) – «խոսափող» հասկացության մեջ ուժեղացուցիչ համակարգերի ներառումը և ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է իրականացվի դադարեցումը (կետ 72),

Հոդված 14(4) – ինչպիսի գործողություններ կարող են ձեռնարկվել դադարեցում իրականացնելու նպատակով (կետ 74),

Article 15(1) – հրապարակային միջոցառման ոչ պատշաճ կարգավորումը հետաքննելու կարգը և հատուցում ստանալու՝ մասնակիցների կարողությունը (կետ 75),

Հոդված 15(3) – կազմակերպիչների պատասխանատվության շրջանակները (կետ 77), և

Հոդված 16 – օրենքի նախագծի գործողության մեջ մտնելը (կետ 78):

82. Ի վերջո, անհրաժեշտ է ապահովել միատեսակ եզրույթների/տերմինների օգտագործում (7-րդ և 17-րդ կետեր):

Եզրակացություն

83. Ակնհայտ է, որ այս օրենքով փորձ է արվում միջազգային չափանիշներին համահունչ իրավական դաշտ սահմանել հավաքներ կազմելու ազատության իրականացման համար, և օրենսդրական դրույթներն արդարացի կերպով անդրադառնում են բազմաթիվ մտահոգիչ խնդիրների: Այնուհանդերձ, օրենքի նախագիծը մի շարք առումներով ներքին հակասություններ է պարունակում, օգտագործված եզրույթները հստակ չեն, և դրույթները վատ են համակարգված. այս ամենն ազդում է օրենքի ընդհանուր կառուցվածքի վրա: Բացի այդ, օրենքի նախագծից պարզ է դառնում, որ որոշակի՝ ոչ այնքան բարենպաստ վերաբերմունք կա ցույցերի նկատմամբ, և օրենքի նախագիծն ընթերցողի մոտ տպավորություն է առաջանում, որ ցույցեր անցկացնելու համար պահանջվում է դրանք հիմնավորել՝ այն բանի փոխարեն, որ «սպացուցման բեռը» կրեն կանոնակարգիչ հսկողություն իրականացնողները: Ակնհայտաբար, անհրաժեշտ է, որպեսզի ընդունվելիք օրենքում ուղղակիորեն արտացոլված լինի կանխավարկածն ի օգուտ այն մոտեցման, որ ցույցերն իրավաչափ գործողություններ են, որոնք իսկապես առողջ ժողովրդավարության անբաժանելի տարրեր են: Եթե այս խնդիրը չլուծվի, ապա դրույթների կիրառման եղանակը, նույնիսկ եթե դա տեխնիկապես համահունչ լինի միջազգային չափանիշներին, անկասկած կառաջացնի դրանց խախտումներ: Անհրաժեշտ է դասակարգել մի շարք տարբեր խնդիրներ, որոնց կապակցությամբ անհրաժեշտ կլինի օրենքի նախագիծը լրացուցիչ հղել: Կան նաև մի քանի դրույթների տարրեր, որոնք պետք է հանվեն նախագծից, իսկ շատ այլ դրույթներ անհրաժեշտ է փոփոխել:

Ջերմի ՄակԲրայդ
4-ը սարիլի, 2004թ.